Խ. Ս. Հ. Մ. ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

ՀԱՇՎԱՌՄԱՆ-ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

338.1Կ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

23659

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1938 ԹՎԻ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

(Այն կոլտնտեսությունների համար վորոնք 1938 թ. հաշվապահությունը տարել են կրկնակի սիստեմով):

ՅԵՐԵՎԱՆ 1938 Թ.

1952

1938 թ.

1938 թ.

1325

Պատվեր Տիրաժ 1150

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

## ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 1938 Թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՅԵՎ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԲԱՇԽԵԼՈՒ ԱՌԹԻՎ

*Կոլտնտեսության տարեկան հաշվետվությունը կազմվում ե կոլտնտեսության վարչության կողմից, ստուգված հաշվային գրանցումների հիման վրա և այն բանից հետո, յերբ կավարտվի ամբողջ տնտեսության ստուգումը, այսինքն՝ կոլտնտեսության գույքի մթերքների, նյութերի, դրամական և այլ միջոցների, ինչպես և առ 1 հունվարի 1939 թ. դրությամբ հաշվարկների (կոլտնտեսության պարտքերի ու պահանջների) և ֆոնդերի ինվենտարիզացիան։*

*Ինվենտարիզացիայի արդյունքները պետք ե քննության առնվի կոլտնտեսության վարչությունում և միայն դրանից հետո կոլտնտեսության հաշվետարը հաշվապահական գրքերում յեզրափակիչ ձևակերպումներ ե կատարում։*

*Տարեկան հաշվետվությունը կազմելիս անհրաժեշտ ե ղեկավարվել հետևյալով՝*

*1. Տարվա ընթացքում կոլտնտեսության կողմից ստացված բերքի և անասնապահության ամբողջ մթերքները, ինչպես և 1938 թ. դրամական յեկամուտները բաշխվում են գյուղատնտեսական արտելի կանոնադրության և ԽՍՀՄ ԺԿԽ-ի առ............... 193 թ. «Անասունի և անասնապահության մթերքների վաճառքից գոյացած գումարը բաշխելու կարգի մասին» վորոշման համաձայն։*

*2. Բերքը և անասնաբուծության մթերքները բաշխելիս, բաշխման մեջ պետք ե մտցվեն վոչ միայն սեփական տնտեսությունից ստացված մթերքները, այլև դրսից ստացված մթերքները, ինչպես որինակ՝ միջկոլտնտեսային փոխանակության ժամանակ վորպես հավելավճար ստացված հացահատիկը, կոլտնտեսության կողմից պետությանը հանձնած յերեքնուկի, քունջութի, կանեփի և այլ սերմերի դիմաց ստացված հացահատիկը։*

3. Այն դեպքերում, յերբ կոլտնտեսության կուլտուրաների մի մասն առ 1-ը հունվարի 1939 թ. անկալսել (անմշակ) է մնում, այդ կուլտուրաների արտադրանքը պետք է մտցվի 1938 թվի յեկամուտների բաշխման մեջ։ Այդ արտադրանքի քանակը հաշվվում են յենթադրաբար։

Յեթե հետագայում պարզվի, վոր փաստացի արտադրանքն ավելի յե ստացվել, քան յենթադրվում եր, ապա տարբերությունը գրանցվում է 1939 թ. յեկամուտի մեջ։ Յեթե արտադրանքը պակաս է ստացվում, քան յենթադրվում եր, կատարվում է համապատասխան վերահաշվարկում։

4. 1938 թ. դրամական յեկամուտ պետք է հաշվել, ինչպես 1938 թ. արտադրանքի իրացումից փաստացի ստացված և 1938 թ. ցույց տված սպասարկման համար ստացած գումարները, այնպես էլ այն գումարները, վորոնք ստացվելու յեն դեբիտորներից 1938 թ. արտադրանքի իրացման դիմաց և 1938 թվին ցույց տված սպասարկման համար ստանալիք գումարները՝ ինչպես և 1938 թ. արտադրանքի իրացումից վորը յենթադրվում է ստանալ 1939 թ.։ Ուստի 1938 թ. արտադրանքի մնացորդը (առ 1/I 1939 թ.), վորը նախատեսնված է իրացնելու կամ յենթակա յե լրիվին պետությանը հանձնելու (բամբակ, ճակնդեղ և այլն) մտցվում են 1938 թվի դրամական յեկամուտի մեջ։

Այդ մնացորդի գնահատականը, այն գումարով, ինչ գումարով մտցվում է այն 1938 թ. դրամական յեկամուտի մեջ կատարվում է այսպես՝

ա) պետությանը պարտադիր կարգով հանձնած արտադրանքի գինը պետական մթերման գներով հաշվի առնելով արտադրանքի վորակը։

բ) ըստ պայմանագրերի հանձնվող արտադրանքի գնահատումը պայմանագրերով պայմանավորված գներով (ներառյալ նաև տեխնիկական կուլտուրաների, ճակնդեղի, վուշի, կանեփի հանձնման պլանի գերակատարման համար յենթադրվող պարգև-հավելումը).

գ) այն արտադրանքը, վորն իրացվում է կոլտնտեսային առևտրի կարգով ընդհանուր ժողովի կողմից սահմանված հնարավոր իրացման գներով։ Ընդվորում յեթե ընդհանուր ժողովը վորոշել է վերամշակած արտադրանք վաճառել (որինակ՝ յուղ), ապա արտադրանքը գնահատվում է վորպես վերամշակած մթերքներ (որինակ՝ արևածաղկի յուղ և վոչ թե արևածաղիկ)։

դ) Յեթե 1938 թ. արտադրանքի փաստական հանձնումը և իրացումը 1939 թ. չլինի այն գումարից բարձր, վորով այդ արտադրանքը գնահատված էր և մտցված 1938 թ. տարեկան հաշվետվության փողային յեկամտի մեջ, ապա ստացված տարբերությունը հաշվում է 1939 թ. յեկամտի մեջ։

Իսկ յեթե ստացած գումարը, ընդհակառակը կլինի պակաս, ապա տարբերությունը ծածկելու հարցը կվորոշվի կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշումով, շրջանային հողբաժնի համաձայնությամբ։ Վորպեսզի խուսափել 1939 թ. իրացման համար նախատեսնված արտադրանքի գնահատման ժամանակ հնարավոր վերահաշվարկումներից, անհրաժեշտ է ավելի քան ճշկրիտ կերպով հաշվի առնել իրական ստացվելիքը վորը կարող է ստացվել արտադրանքի փաստական իրացման ժամանակ։

5. Մուտք-յելքի նախահաշվի կատարման և դրամական յեկամուտների բաշխման վերաբերյալ աղյուսյակում (աղ. 23) «Արտադրական ծախսեր դրամական յեկամուտների հաշվին» հատվածում՝ 5, 9, 12, 13 և 14 հոդվածներում պետք է ցույց տրվի 1938 թվի ընթացքում արտադրության մեջ փաստորեն ծախսված՝ գնված նյութերի արժեքը (և վոչ թե դրամի ծախսումն այդ նյութերը գնելու համար, ինչպես այդ կար 1937 թ. հաշվետվության մեջ)։ Յեկամուտների բաշխման ժամանակ դրամական յեկամուտից էլ պետք է հանվի այն գումարը, վորը հավասար է արտադրության մեջ փաստորեն ծախսված նյութերի արժեքին։ Այսպես օրինակ, յեթե կոլտնտեսությունը 1938 թ. օժանդակ ձեռնարկների համար գնել է 1000 ռ., հումույթ, իսկ մինչև առ 1/I 1939 թ. այդ հումույթից մշակվել է միայն 800 ռուբ. և 200 ռուբ. հումույթը մնացել է և այն պետք է մշակության յենթարկվի 1939 թ., ապա 9-րդ հոդվածով «Հումույթ և նյութեր օժանդակ ձեռնարկների համար» «փաստացի» սյունյակում պետք է գրվի 800 ռուբ. և վոչ թե 1000 ռուբլի։ Յեկամուտների բաշխման ժամանակ դրամական յեկամուտից պետք է հանվի միայն 800 ռուբ.։

Սակայն այն դեպքերում, յերբ նյութերը գնվելու են վարկով, ծախքերի մասում մտցվում է այն գումարը, վորը վարկի պայմանի համաձայն պետք է ծածկվի 1938 թվի յեկամուտներից։ Օրինակ՝ կոլտնտեսությունը 1938 թ. 3000 ռուբլու հանքային պարարտանյութեր է գնել յերկու տարվա ժամկետում վճարելու պայմանով։ 2000 ռուբլին՝ 1938 թ. յեկամուտից, իսկ 1000 ռուբլին՝ 1939 թ. յեկամուտից։ Պարարտանյութերը 1938 թ. ամբողջապես ներդրվել են։ Տվյալ դեպքում, 6 հոդվածում—

«Հանքային պարարտանյութեր» գրվում է՝ 2000 ռուբլի, և ոչ թե 3000 ռուբլի և ցեկամուտների բաշխման ժամանակ դրամական ցեկամուտից հանվում է՝ միայն 2000 ռուբլի, այսինքն՝ այն գումարը, որը կոլտնտեսությունը վարկի պայմանների համաձայն պետք է ծածկեր 1938 թ. ցեկամուտից։

Եթե կոլտնտեսության մեջ առ 1/I 1938 թ. գնովի նյութերի մնացորդ է ցեղել և այդ մնացորդն արդեն վճարվել է 1937 թ. կամ անցած տարիների ցեկամուտից, ապա այդ մնացորդի արժեքը չպետք է 1938 թ. ցեկամուտից դուրս հանվի և հետևապես չպետք է մտնի 1938 թ. արտադրական ծախսերի գումարի մեջ, որը ցույց է տրվում տարեկան հաշվետվության մեջ 23 աղյուսակի 3 հատվածում։

Օրինակ՝ 1938 թ. արտադրության մեջ, օժանդակ ձեռնարկների համար, ծախսված հումույթի ընդհանուր արժեքն արտահայտվում է 1500 ռուբլի։ Այդ հումույթի մի մասը՝ 500 ռուբլու արժեքով անցել է 1938 թ. որպես 1937 թ. գնված և 1937 թ. ցեկամուտներից վճարված հումույթի մնացորդ։ Տվյալ դեպքում 9-րդ հոդվածում «Հումույթ և նյութեր օժանդակ ձեռնարկների համար» «փաստորեն» սյունակում պետք է գրվի 1000 ռուբլի և ոչ թե 1500 ռուբլի և 1938 թ. դրամական ցեկամտից պետք է հանվի 1000 ռուբլի, քանի որ մնացած 500 ռուբլին արդեն վճարվել է 1938 ցեկամուտից։

6. Բերքի և անասնապահության արտադրանքը, ինչպես և կոլտնտեսության դրամական ցեկամուտները բաշխվում են 1938 թ. վաստակած բոլոր աշխօրերի վրա։ Կոլտնտեսականների և տրակտորիստների այն աշխօրերը, որոնք գրանցվելու յեն 1939 թ. 1938 թվի արտադրանքի (վուշ, կանեփ և այլն) մշակման աշխատանքների համար պետք է մասնակցեն 1939 թվի ցեկամուտների բաշխմանը։

7. 1938 թ. բերքի հացահատիկը 1939 թվին կալսելու համար ՄՏԿ-այանի աշխատանքի վարձատրությունը կատարվում է 1938 թ. ցեկամուտներից։

8. Տեխնիկական կուլտուրաների հանձնման պլանը գերակատարելու համար, տեխնիկական կուլտուրաների մշակման (շաքարի ճակնդեղ, վուշ, կանեփ) ապարիզում աշխատած կոլտնտեսականներին տրվող պարգև-հավելումների գումարները հաշվառվում են ըստ աշխօրերի բաշխվող դրամական ցեկամուտի հաշվին։

9. Յեթե անցյալ տարի տրակտորիստների հետ հաշվարկ և այլ պարտադիր ծախսերը կատարելու համար կոլտնտեսությունն ստիպված էր այլ աղբյուրներից (վոչ եկամուտներից) միջոցներ փոխ առնել, ապա այդ գումարները պետք է լրիվ կամ մասնակի տեղադրվեն 1938 թ. եկամուտներից, նայած թե ինչ պայմաններում է վերցվել փոխ առած գումարը:

10. Ոժանդակ ձեռնարկություններ ունեցող կոլտնտեսությունները եկամուտներից անբաժանելի ֆոնդին հատկացում կատարում են ամբողջ դրամական եկամուտների գումարից, դուրս գալով նրանից գնված և ծախսված հումույթի արժեքը:

Որինակ՝ կոլտնտեսության ամբողջ դրամական եկամուտը կազմում է 200 հազար ռուբլի, վորից 50 հազար ռուբլին ստացվել է արդյունաբերական ձեռնարկությունների շինվածքների վաճառքից: Այդ շինվածքները պատրաստելու համար կոլտնտեսությունը ծախսել է՝ 30.000 ռուբլու գնված հումույթ: Նշանակում է, անբաժանելի ֆոնդին հատկացում պետք է կատարել վոչ թե 200 հազար ռուբլու հաշվով, այլ 170 հազար ռուբլու (200—30): Այդ գումարով էլ (170 հազար ռուբլին) պետք է հաշվել կոլտնտեսականներին և տրակտորիստներին (հոդ. 28 աղյուսակ 23), ըստ աշխօրերի բաշխվող դրամական եկամուտ, ինչպես և վարչա-տնտեսական ծախսերը (հոդ. 21 աղյուսակ 23) վորոշելով այն, թե դրամական եկամուտների վոր տոկոսն է բաշխվում ըստ աշխօրերի և վոր տոկոսն է կազմում վարչա-տնտեսական ծախսերը.

11. Համախառը բերքը հաշվի առնելիս կոլտնտեսության բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքը հաշվի պետք է առնվի պետական մթերման գներով, հաշվի առնելով վորակը: Այն արտադրանքը, վորի նկատմամբ չկա պետական մթերման գին, պետք է գնահատվի կոլտնտեսության ընդհանուր ժողովի կողմից սահմանված գներով (անասունի մորթվածքի արտադրանքը գնահատվում է՝ ելնելով անասունի կենդանի քաշի՝ պետական մթերման գներից):

12. Բերքը կոմբայնով հավաքելիս և կալսելիս, արտադրանքը մուտք է արվում մինչ զտումը և տեսակավորումը (անմիջապես կալսիչի կամ կոմբայնի տակից):

13. Դաշտավարության յերկրորդական մթերքների համախառն բերքի մեջ (աշնանացանի և գարնանացանի ծղոտը, կաստրա, խծուծը, գուզ-պայա և այլն) մտցվում են յերկրորդական

*արտադրանքի մեջ միայն այն քանակը, վորը տնտեսության մեջ ոգտագործվում ե վորպես անասնակեր, անասունների ցամքար, շինանյութ կամ վառելանյութ, վաճառում կամ բաշխվում ե ըստ աշխորերի և այլն։ Չի գնահատվում և չի մտցվում համախառն բերքի մեջ արտադրանքի այն մասը, վորը տնտեսության մեջ չի ոգտագործվում, չի բաշխվում ըստ աշխորերի և չի վաճառվում։*

*14. Յեթե առ 1/I 1938 թ. կոլտնտեսությունն ունեցել ե՝ Գյուղբանկում կապիտալ ներդրումների ընթացիկ հաշվի չմտցված, կապիտալ ներդրման միջոցներ, ապա տարեկան հաշվետվության 24 աղյուսակը «կապիտալ ներդրման միջոցները և նրանց ծախսումը» կազմելուց առաջ, այդ գումարները պետք ե մանրազննին ստուգվեն և աղյուսակի մեջ մտցվեն այն գումարները, վորոնք ռեալ արժեքներով ապահովված են (թեկուզ այդ գումարների մի մասը նպատակին ոգտագործված չլինի)։*

*Կապիտալ ներդրման հաշվում չմտցրած համարվող գումարներում կորուստների գումարը (որինակ՝ անհուսալի պարտքերը գույքի համար և այլն), ինչպես և անբաժանելի ֆոնդին սխալ հատկացում կատարելուց գոյացած գումարները պետք ե դուրս հանվեն։ Այդ նպատակով անհրաժեշտ ե նայել կոլտնտեսության նախորդ տարիների տարեկան հաշվետվությունները, ստուգել նրանցում անբաժանելի ֆոնդին արված հատկացումների ճշտությունը, ստուգել կոլտնտեսության դեբիտորական պարտքերը գույքի համար, ստուգել կապիտալ ներդրումների հաշվին կատարած ծախքերը և միայն դրանից հետո սահմանել առ 1/I 1938 թ. Գյուղբանկ ընթացիկ հաշիվ չմտցված կապիտալ ներդրման միջոցները։*

*Սահմանելով այդ գումարը, կոլտնտեսությունը պետք ե միջոցներ ձեռք առնի ազատելու վոչ իր նպատակին ներդրված կապիտալ ներդրման միջոցները և մտցնելու այն Գյուղբանկ կապիտալ ներդրումների ընթացիկ հաշիվ։*

ԽՍՀՄ Հողժողկոմի տեղակալ ՁՅԻՎ.ԻԿՈՎ

## ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 1938 ԹՎԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԱՌԹԻՎ

*(Այն կոլտնտեսությունների համար, վորոնք հաշվառումը տարել են կրկնակի սիստեմով)։*

## Աղյուսակ 1 «Ընդհանուր տեղեկություններ»

1. Կազմակերպման տարվա վերաբերյալ հարցին, այն կոլտնտեսությունները, վորոնք կազմվել են միանալու միջոցով համարիչով ցույց են տալիս միանալու տարին, իսկ հայտարարով ցույց են տալիս ձուլված յուրաքանչյուր կոլտնտեսության առաջացման տարին։

Ապախոշորացման հետևանքով կազմված կոլտնտեսությունները՝ համարիչով ցույց են տալիս ապախոշորացման (կամ առանձնացման) տարին, իսկ հայտարարով ապախոշորացված կոլտնտեսության կամ կոլտնտեսության կազմակերպման տարին, վորից առանձնացվել է տվյալ կոլտնտեսությունը։

2. Վեցերորդ հարցում պատասխան են տալիս միայն այն կոլտնտեսությունները, վորոնք 1938 թվին փաստորեն՝ կոլտնտեսության հետ կնքած պայմանագրի կարգով, սպասարկվել են ՄՏԿ-այանի կողմից, ինչպես նաև այն կոլտնտեսությունները, վորոնց համար ՄՏԿ-այանը 1938 թ. կատարել է աշնանային աշխատանքը (թեկուզ և աշխատանքները կատարվել են առանց գրավոր պայմանագրի)։

## Աղյուսակ 2 «Կոլտնտեսության կազմը»

1. Այս աղյուսակը 1—5 կետերում տրվում են տեղեկություններ կոլտնտեսության մեջ յեղած տնտեսությունների ընդհանուր թվի (ցուցակային) և 1938 թ. ընթացքում ընդունված և դուրս գնացած տնտեսությունների մասին։

2. բ հատվածում «կոլտնտեսային առկա տնտեսությունները և նրանց բնակչությունը» (6—9 կետ) տրվում են տեղեկություններ միայն այն կոլտնտեսային տնտեսությունների մասին (ընտանիքավոր և միայնակ), վորոնց բնակչությունն առ 1 հունվարի 1939 թ. ապրում են կոլտնտեսությունում, թեկուզ ընտանիքի վոչ լրիվ կազմով։ Այդ տնտեսությունների թիվը ցույց է տրվում 6-րդ կետում։

7-րդ կետում ցույց է տրվում այն տնտեսությունների բնակիչների քանակը, վորոնք առ 1 հունվարի 1939 թ. ՓԱՍՏՈՐԵՆ ՅԵՂԵԼ ԵՆ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ (չհաշված ընտանիքի այն անդամներին, վորոնք առ 1 հունվարի 1939 թ. բացակայել են տնտեսությունից), իսկ «ա» և «բ» կետերում ցույց են տրվում, թե բնակչության այդ կազմում վորքան 16 տարեկան և բարձր աշխատունակ և պատանի (կետ «ա») (կետ «բ») կան,

բացի այդ 8 և 9 կետերում ցույց է տրվում առ 1 հունվարի 1939 թ. կոլտնտեսությունից դուրս (կարմիր բանակում, ուսումնական հաստատություններում և այլն) գտնվող բացակա բնակիչների թիվը։

Յեթե 7-րդ կետում հիշատակված բնակչության քանակին գումարենք 8-րդ կետում հիշատակված բնակչության քանակը, ապա հետևանքում կստացվի 6-րդ կետում հիշատակված բնակչության և առկա տնտեսությունների ընդհանուր քանակը։

3. «բ» հատվածում «բացակայող կոլտնտեսային տնտեսությունները» տեղեկությունները պետք է տրվեն կոլտնտեսային այն տնտեսությունների մասին, վորոնք առ 1 հունվարի 1939 թ. լրիվ կազմով կոլտնտեսություններից դուրս են գտնվել անկախ նրանից, թե վորքան ժամանակով են դուրս գնացել։

Այստեղ հենց ցույց է տրվում և բացակայող միայնակ կոլտնտեսականների մասին տեղեկությունները, սակայն վոչ ընտանիքի բացակայող անդամների մասին—նրանց մասին տեղեկությունները տրվում են «բ» հատվածով։

4. 6-րդ և 10-րդ կետերում նշված կոլտնտեսային տնտեսությունների (ընտանիքավոր և միայնակ) գումարը պետք է տա 1 կետում նշված՝ կոլտնտեսության մեջ յեղած կոլտնտեսային տնտեսությունների ընդհանուր թիվը։

5. 16 և բարձր տարիք ունեցող աշխատունակների թվին պետք է դասել հիշատակված տարիքի բոլոր անձանց, վորոնք աշխատանքի ընդունակ են, անկախ նրանից նրանք մասնակցել են կոլտնտեսության աշխատանքներին, թե չեն մասնակցել։

7. Տնտեսությունների (ընտանիքավոր և միայնակ) թվի կետ 1, 6 և 10 և բնակչության քանակի վերաբերյալ տեղեկությունները կետ 7, 8 և 9 վերցվում են կոլտնտեսության անդամների և նրանց ընտանիքների հաշվառման գրքից (ձև № 35)։ Ընդվորում մինչև 1939 թ. հունվարի 1-ը կոլտնտեսությունից դուրս յեկած կամ հեռացված տնտեսությունները (ընտանիքավոր և միայնակ) հաշվի չեն առնվում։

Բացակայող տնտեսությունների և բնակչության քանակը սահմանվում է՝ ղեկավարվելով № 35 ձևի «ծանոթություն» սյունակում արված նշումներով։

7. Ամբողջ 1838 թ. ընթացքում կոլտնտեսություն մտած և կոլտնտեսությունից դուրս յեկած (կ. 2, 3, 4) ու 1938 թ. ընթացքում հեռացված կոլտնտեսականների (կետ 6) քանակի վե-

բաբերյալ տեղեկությունները վերցվում են կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշումներից։

Ընդվորում հեռացված կոլտնտեսականների վերաբերյալ տեղեկությունները պետք է վերցվեն միայն շրջգործկոմի կողմից քննության առած վորոշումներից։

## Աղյուսակ 3 «Աշխորերի վաստակում 1938 թ.»

1. Այս աղյուսակում բոլոր կետերով ցույց են տրվում միայն 1938 թ. վաստակած աշխորերը։ Սակայն բացառիկ դեպքերում, յերբ կոլտնտեսություններում 1938 թ. յեկամուտները բաշխելիս կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշմամբ հաշվի յեն առնվում նաև վորևե պատճառով 1937 թ. յեկամուտների բաշխման մեջ չմտցրած 1937 թ. վաստակած աշխորերը, ապա այդ աշխորերը մտցվում են 20 և 21 կետերում ցույց տրված աշխորերի քանակի մեջ։

2. 1938 թ. վաստակած աշխորերը ցույց են տրվում 1—17 կետերով այդ թվի մեջ չմտցնելով այն աշխորերը, վորոնք գյուղատնտեսական արտելի կանոնադրության 15-րդ կետի համաձայն գրանցվել են իբրև պարգև, ինչպես նաև դուրս չգալ այն աշխորերը, վորոնք գյուղատնտեսական արտելի կանոնադրության 15-րդ կետի համաձայն իջեցվել են։

3. 6-րդ կետում գրվում է կոլտնտեսությունում յեղած հիմնական տեխնիկական կուլտուրայի անունը և ցույց է տրվում թե կոլտնտեսականները վորքան աշխոր են վաստակել՝ այդ կուլտուրայի արտադրության հետ կապված բոլոր աշխատանքներից։

4. Ըստ տնտեսության ճյուղերի վաստակած աշխորերի քանակը վերցվում է «ծախսերի հաշվառում» գրքից (ձեվ №11) տնտեսության համապատասխան ճյուղերի անալիտիկ հաշիվներից և ծախքերի հաշիվներից։

Հղի կանանց ոգտին գրանցած աշխորերի քանակը (կ. 16) վերցվում է՝ հղիության համար արձակուրդ ստացած կոլտնտեսուհիների անձնական հաշիվներից։

Վաստակած աշխորերի թվի ընդհանուր հանրագումարը (տարեկան հաշվետվության 17-րդ կետ) պետք է հավասար լինի № 7 հաշվով «Աշխորեր» աշխորերի գումարին և գլխավոր գրքի 12, 13, 14, 15, 17 և 18 հաշիվներով հաշվառած աշխորերի հանրագումարների գումարին։

5. 20 և 21 կետերը լրացվում են չեկամուտների բաշխման տեղեկագրի տվյալների հիման վրա:

## Այունակ 4 «Կոլտնտեսականների մասնակցությունը համայնական տնտեսությանը»

1. Այս սյունակում տրվում է կոլտնտեսականների խմբավորումները ըստ նրանց վաստակած աշխօրերի (տող 1—7) և ցույց է տրվում այն կոլտնտեսականների թիվը, վորոնք 1938 թ. ընթացքում վոչ մի աշխօր չեն վաստակել:

Խմբավորման մեջ պետք է մտնեն 16 և բարձր տարիք ունեցող աշխատունակ բոլոր կոլտնտեսականները, ինչպես և 12-ից մինչև 16 տարեկան պատանիները, բացառությամբ այն կոլտնտեսականների վորոնք բացակայում են մեկ տարուց ավելի:

Տրակտորիստներին այս կամ այն խմբին դասելիս, պետք է չելնել յուրաքանչյուր տրակտորիստի վաստակած ամբողջ աշխօրերի թվից, անկախ նրանից, աշխօրերը վաստակել են իրենց կոլտնտեսության, թե ուրիշ կոլտնտեսության մեջ:

Այունակը լրացվում է «կոլտնտեսականի անձնական հաշիվ» (ձև № 36 ) տվյալների հիման վրա խսկ տրակտորիստներին նրանց աշխ. գրքույկների տվյալներով:

## Այունակ 5 «Բանվորական ուժի ներգրավում չեվ ոգտագործում դրսից»

Այունակը լրացվում է «վարձու անձանց հետ աշխատավարձի հաշվարկներ» № 8 հաշվի № 7 չենթահաշվի հիման վրա, իսկ ըստ տնտեսության ճյուղերի մարդ-որերի թիվը եվ սահմանվում է՝ 12, 13, 14 հաշիվներում կատարված գրանցումներով կամ բրիգադիրներին հարցում անելու միջոցով:

## Այունակ 6 «Տեսակավոր ցանքեր»

Այս սյունակի բոլոր սյունակները փաստորեն ցանված, հավաքված տարածությունների և համախառը բերքի վերաբերյալ լրացվում են այն նույն աղբյուրների հիման վրա, ինչպես և 7 սյունակի համապատասխան սյունյակները (տես սյուն. 7) միայն այն տարբերությամբ, վոր այստեղ տեղեկությունները տրվում են միայն տեսակավոր ցանքերի նկատմամբ: Սորտի անունը և «փաստորեն ցանված է» սյունակը լրացվում է ցանքերի ապրոբացիայի ակտի տվյալների հիման վրա, իսկ չեթե ապրո-

բացիա չի կատարվել, ապա ցանված սերմերի վերաբերյալ սորտավկայականի համաձայն։ Այն դեպքերում, յերբ կոլտնտեսությունում կատարվել է ապրոբացիա, 2 սյունյակում սորտի անունից հետո, փակագծերում պետք է գրել «ապր» վորը ցույց կտա, վոր տվյալ կուլտուրայի նկատմամբ կատարվել է ապրոբացիա։

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե ապրոբացիայի ժամանակ ցանքի մի մասը համարվում է խոտանված, ապա խոտանված տարածությունը հարկավոր է ցույց տալ «կուլտուրայի անունը» սյունյակում, այն տողի դիմաց, վորով տեղեկություններ են տրվում տվյալ կուլտուրայի տեսակի մասին։ Այնտեղ գրել խոտանված է ________ հեկտար։*

*4-րդ սյունյակում խոտանված տարածությունը չի գրանցվում։*

## Աղյուսակ 7 «Կոլտնտեսության 1938 թվի պլանի կատարումը յեվ յեկամուտները դաշտավարությունից»

1. Աղյուսակի առաջին սյունյակում գրվում է 1938 թ. բերքի համար ցանված բոլոր կուլտուրաների անունները։ Այն կուլտուրաների, վորոնց անունները տպագրված անվանացուցակում չկան պետք է գրվեն, ընդվորում, յեթե այս կամ այն հատվածում (որինակ՝ «հացահատիկային կուլտուրաներ» «տեխնիկական կուլտուրաներ») ազատ տողերը չեն բավարարում այս հատվածի բոլոր կուլտուրաները գրանցելու համար, ապա պակաս կարևորություն ունեցող կուլտուրաները միացվում են մեկ խմբի մեջ։ Որինակ «այլ հացահատիկային» «այլ տեխնիկական» «այլ բանջարաբուծական» և այլն և հետագայում կուլտուրաների այդպիսի միացյալ խմբով տեղեկությունները պետք է տրվեն մեկ տողով։ 1938 թ. բերքի համար ցանված կուլտուրաների անվանացուցակը վերցվում է կոլտնտեսության արտադրական պլանի հիման վրա և անպայմանորեն ստուգվում է՝ աշխատանքներն ընդունելու առթիվ կազմած արձանագրությունների տվյալներով (ձև № 28)։

«Բանջարաբուծական և բախչեբուծական կուլտուրաներ» հատվածով անվանորեն ցույց են տրվում միայն 2—3 գլխավոր կուլտուրաներ, իսկ մնացած կուլտուրաները միացվում են «այլ» խմբի մեջ։ Այն կոլտնտեսությունները, վորոնք զբաղվում են սածիլատնկմամբ (вингонкой райсады) վաճառելու համար, ինչպես և բանջարաբուծական կուլտուրաների սերմնաբուծությամբ

կոլտնտեսությունները, վորոնք բանջարեղեն աճեցնում են ջերմանոցներում, տեղեկությունները տալիս են առանձին տողով, գրելով առաջին սյունյակում «ջերմանոցային բանջարեղեն» «ջերմոցային բանջարեղեն և այլն»:

«Ցանովի խոտեր» հատվածում տող 35 «բազմամյա խոտերի մաքուր ցանք» հարկավոր է տեղեկությունները ցույց տալ այն բազմամյա խոտերի նկատմամբ, վորոնք ցանվել են ինքնուրույն տարածությունների վրա, այլ վոչ թե վորևե մի ուրիշ կուլտուրայի տակ (որինակ, տարեկանի հետ ցանված յերեքնուկն այստեղ ցույց չի տրվում) իսկ 36-րդ տողում «բազմամյա խոտերի վոչ մաքուր ցանք» տեղեկությունները ցույց են տրվում այն բազմամյա խոտերի նկատմամբ, վորոնց ցանքերը կատարվել են այլ կուլտուրայով զբաղված տարածության վրա:

«Դաշտավարության յերկրորդական մթերքներ» հատվածով ազատ տողերում ցույց են տրվում այնպիսի մթերքների անունները, ինչպես որինակ՝ „костра“ խծուծ (отрятк) „гуга том“ (բամբակի գծով) և այլն:

2. Վորոշ առանձնահատկություններ ունեն վուշի, կանեփի և սիսեռի նկատմամբ տեղեկությունների գրանցումը: Թելացու վուշի նկատմամբ տեղեկությունները տրվում են այսպես, տարածությունը տրվում է ընդհանուր՝ մեկ թվով. հեկտարից ստացած բերքը տրվում է յերկու տողով, սերմի բերքը և առանձին թելի բերքը առանց խծուծի (отревев), իսկ ընդհանուր բերքը և նրա բաշխումը տրվում են այն մթերքների նկատմամբ, վորոնք փաստորեն հանձնվել են պետությանը և բաշխվել են, սերմը, ծղոտը, տրեստան, թելը: Յեթե կոլտնտեսությունը վերամշակման և յենթարկել ամբողջ համախառը բերքը պետությանը հանձնելը, վաճառելը և կոլտնտեսականներին բաժանելը կատարել է թելով, ապա բոլոր տեղեկությունները տրվում են «սերմ» և «թելացու» տողերով: Իսկ յեթե կոլտնտեսությունը պետությանը հանձնել է ծղոտ կամ տրեստա (տեխնիկական կուլտուրայի տրեստա) իսկ բերքի մնացած մասը վերամշակել է և կոլտնտեսականներին բաժանել թելացու, ապա տեղեկություններ տրվում են յերկու կամ յերեք տողերով (յեթե պետությանը հանձնել է ծղոտ և տրեստա) ծղոտի համար առանձին և թելացուի համար առանձին: Նման պայմաններում «Համախառը բերք» սյունյակում հարկավոր է ցույց տալ, թե կոլտնտեսությունը վորպես ծղոտ, վորքան վուշ է իրացրել ներառյալ իրաց-

ման և բաշխման նպատակով առանձնացվածը, վորքան և իրացրել վորպես տրեստա և վորքան վորպես թելացու, սակայն այնպես, վոր ամբողջ արտադրանքն այս տվյալներով ստացվի։ Թելի ստացված քանակը գումարել վուշի քանակի հետ փաստացի իրացված թելով, իսկ ստացված գումարը բաժանել վուշի ընդհանուր ցանքի տարածության վրա։ Համախառը բերքը թելի վերածած՝ հարկավոր է գրել 5-րդ սյունյակում համարիչով, իսկ բերքը հեկտարի հայտարարով։

Ծղոտը թելի վերածելը կատարվում է թելի փաստացի յելքի համեմատ, վաղորոք վերամշակածի կամ թելի վերածելու այն նորմաներով, վոր ընդունված է այս մթերքները վուշագործարանին հանձնելու։ Կանեփի արտադրանքի տեղեկությունները տրվում են այնպես, ինչպես վուշի արտադրանքի համար։

4. «ԿԵՐԱԲՈՒՅՍԵՐ» հատվածում սիլոսային կուլտուրաների նկատմամբ պետք է ցույց տրվի փաստացի ցանված և հավաքված տարածությունները։ Լցրած սիլոսի քանակի վերաբերյալ հարցում ցույց է տրվում լցրած սիլոսի ընդհանուր քանակը, հաշվի առնելով սիլոսացրած մոլախոտերը և դաշտավարության արտադրանքի թափուկները (որինակ՝ բույսերի տերևներ և ցողուններ)։

31 տողի 15—19 սյունյակներում տեղեկությունները տրվում են լցրած սիլոսի ամբողջ մասսայի նկատմամբ։ Ուստի 31-րդ տողի 15, 16, 17 և 18 սյունյակների տվյալների գումարը պետք է հավասար լինի լցրած սիլոսի այն քանակին, վորը նշված է «փաստորեն լցրած տոն» խոսքերից հետո։

Յեթե վիկան ցանվել է խոտի համար, իսկ այնուհետև նրա մի մասը հավաքվել է վորպես հատիկ, ապա վորպես հատիկ հավաքված տարածությունը ցույց է տրվում հատիկային կուլտուրաների հատվածում 2, 3 և 4 սյունյակներում և ցանովի խոտեր հատվածում ցանքի տարածություններից հանվում է։

5. 2-րդ պունկտը «ցանքի պլանը» լրացվում է կոլտնտեսության արտադրական պլանի տվյալների հիման վրա, իսկ 3 և 4 սյունյակները «փաստորեն ցանված և հավաքված է» աշխատանքներն ընդունելու վերաբերյալ կազմած ակտերի հիման վրա (ձև № 28)։ Յեթե կոլտնտեսությունում մենատնտեսների ցանքերն արմատի վրա հանրայնացնելու դեպքեր են յեղել, ապա այդ ցանքի տարածությունը վերցվում է հանրայնացման վերաբերյալ ակտից և գումարվում է ինչպես կոլտնտեսության կողմից

փաստացի ցանված ամբողջ տարածությունը, այնպես էլ պլանով նախատեսնված տարածությունը։

6. Կոլտնտեսության ցանած տարածությունը պետք է անպայմանորեն ցույց տրվի ցանքի պլանի կատարման աղյուսակում, միանգամայն անկախ նրանից, թե ինչպես են օգտագործվել այդ ցանքերը, քաղվել են, կերցվել են արմատի վրա կամ կարող է պատահել բոլորովին չեն հավաքվել։ Եթե ցանովի խոտերով զբաղված տարածությունները քաղվելուց հետո աշնանը վարվել են, ապա այդ տարածությունները պետք է ցույց տրվեն «Ցանովի խոտեր» հատվածում։

7. Ցանքի պլանի կատարման առթիվ հաշվետվություն տալով, անհրաժեշտ է այդ գործով կոլտնտեսությունում յեղած բոլոր փաստաթղթերն ունենալ ձեռքի տակ։ Մասնավորապես հարկավոր է օգտագործել և օպերատիվ հաշվետվություն և գարնանացանի կամպանիայի առթիվ յեզրափակիչ հաշվետվության տվյալները։ Բոլոր աղբյուրները պետք է համեմատվեն մեկը մյուսի հետ և միայն ստուգումից հետո վերջնականապես սահմանված թիվը մտցվում է հաշվետվության մեջ։ Յեթե այս կամ այն կուլտուրայի նկատմամբ պարզվի, վոր զգալի տարբերություն է տալիս կամ նույնիսկ բաց է թողված յեզրափակիչ հաշվետվության համեմատ, անհրաժեշտ է հաշվետվության բլանկի վրա նշել այդ տարբերության պատճառների մասին։

8. Հետևյալ 5-րդ սյունյակում ցույց է տրվում մեկ հեկտարից ստացված բերքը, բերքահավաքի տարածության հաշվով։ Այս բերքն ստացվում է համախառը բերքը (սյուն. 6) բաժանելով 4-րդ սյունյակում նշված փաստացի հավաքված տարածության վրա։ Այս յեղանակով ստացված տվյալները մեկ հեկտարից հավաքված բերքի վերաբերյալ պետք է համեմատվեն օպերատիվ հաշվետվության տվյալների հետ և նրանց միջև տարբերություն լինելու դեպքում և այդ և մյուս տվյալները պետք է ստուգվեն։

9. Համախառը բերքը (6 սյուն. համար) և նրա արժեքը պետական մթերման գներով (7-րդ սյուն. համար) վերցվում են նատուրալ յեկամուտների և նրանց բաշխման հաշվառումը գրքից (ձև № 3)։ Ընդվորում հարկավոր է նկատի ունենալ, վոր այն դեպքերում, յերբ առ 1 հունվարի 1939 թ. կոլտնտեսությունում չկալսված հաց է մնում, հացահատիկը (և այլ մթերքներ), վորն ստացվելու յե կալսումից, անպայմանորեն պետք է

մտցվեն 1938 թ. համախառը բերքի և բաշխման մեջ: Այդ հացահատիկի (և այլ մթերքների) քանակը պետք է վորոշվի վաղորոք կալսած հացահատիկի (հեկտարից, բլուկից և այլն) յելույթի հիման վրա, հաշվի առած չկալսված հացի վորակը և ձևակերպված կոլտնտեսության վարչության վորոշումով: Հացահատիկի այդ քանակը (և կալսումից ստացված յերկրորդական արտադրանքի) և նրա գնահատումը պետական մթերման գծով անպայմանորեն պետք է գրվեն նատուրալ յեկամուտների հաշվառման գրքում: Գրանցումն արվում է վերջին տողով «յենթադրվում է 1938 թ. բերքի կալսումից ստանալ 1939 թ.» ինչպես ընդհանուր գումարով, այնպես էլ ըստ առանձին բրիգադների: Դրանից հետո գրքի յուրաքանչյուր սյունակով ի մի յեն բերվում ընդհանուր տարեկան հանրագումարները:

10. Համախառը բերքը և նրա արժեքն ստացվում են նատուրալ յեկամուտների հաշվառման գրքից այսպես.

ա) Յեթե տվյալ կուլտուրայի համախառը բերքից բացի այլ մուտքեր են յեղել (որինակ՝ աղունավարձ, աշխատանքի դիմաց վարձատրություն, 1937 թ. բերքը 1938 թ. կալսելու ժամանակ յենթադրվող քանակից ստացած հացահատիկը, վորը հաշվվում է 1938 թ, յեկամուտի մեջ և այլն) ապա տարեկան հանրագումարները «քանակը» և «գումարը» կրեդիտային սյունակներում կլինեն. «քանակը» սյունյակում համախառը բերքը, իսկ «գումարը» սյունյակում համախառը բերքի արժեքը: Այդպիսի դեպքում այդ հանրագումարները կփոխանցվեն կոլտնտեսության տարեկան հաշվետվության 7-րդ աղյուսակի համապատասխան սյունյակները (6 և 7):

բ) Յեթե կոլտնտեսությունը, բացի համախառը բերքից, 1938 թ. ունեցել է այլ նատուրալ յեկամուտներ, ապա այդ յեկամուտները վոչ մի դեպքում համախառը բերքի մեջ չպետք է մտցվեն:

Այդպիսի դեպքերում համախառը բերքը և նրա արժեքը պետական մթերման գներով ստանալու համար, հարկավոր է նախապես, քաղվածքի միջոցով, հաշվել այլ նատուրալ մուտքերի (վոչ համախառը բերքի) քանակը և արժեքը և ստացված հանրագումարները դուրս գալ կրեդիտային շրջանառությունների տարեկան հանրագումարներից «Քանակը» և «Գումարը» սյունյակներով: Դրանից հետո ստացված մնացորդը, «Քանակը»

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

սյունյակում կլինի համախառը բերքը, իսկ «Գումարը» սյունյակում համախառը բերքի արժեքը։

Համախառը բերքի (բոլոր կուլտուրաների) այդ ձևով ստացված ընդհանուր արժեքի վերաբերյալ տվյալները տող 47, անպայմանորեն պետք է համեմատվեն դաշտավարության և մարգագործության, բանջարաբուծության և բախչաբուծության արտադրանքի արժեքի հետ № 19 հաշվի № 1 յենթահաշվի անալիտիկ հաշիվներով, ա) դաշտավարության և մարգագործության արտադրանքի հաշվառման անալիտիկ հաշվով և բ) բանջարաբուծության և բախչաբուծության արտադրանքի հաշվառման անալիտիկ հաշվով։ Յեթե արժեքն այդ անալիտիկ հաշիվներով չի համընկնում տարեկան հաշվետվություններով ստացված արժեքի հետ, հարկավոր է անպայմանորեն համախառը բերքը վորոշելու բոլոր տվյալների և № 19/1 հաշվում արված բոլոր գրանցումների ստուգում կատարել, քանի վոր համախառը բերքի արժեքի մեջ տվյալ դեպքում վոչ մի տարբերություն չպետք է լինի։

Համախառը բերքից ավելի ստացվող նատուրալ յեկամուտների քանակի և արժեքի հաշվետու քաղվածքը պետք է արվի չափազանց ճշտորեն, առանց բաց թողումների, քանի վոր այլ կերպ (մնացորդի գծով) համախառը բերքի սխալ թիվ կստացվի, վորը հետագայում կտա սխալ թիվ մեկ հեկտարից վերցրած բերքի վերաբերյալ։

Այդ նատուրալ յեկամուտների քանակը և արժեքը ցույց է տրվում տարեկան հաշվետվության 7-րդ աղյուսակի ներքևում ծանոթության մեջ։ Ընդ վորում ծանոթության մեջ, 5-րդ կետից «ընդամենը մտցրված և բաշխման մեջ 1938 թ. համախառը բերքից ավելի . . . ռուբ. գումարով» հետո անպայմանորեն ցույց տալ 1937 թ. բերքի հացը 1938 թ. կալսելու ժամանակ ստացած և 1938 թ. յեկամտի մեջ մտցրած հացահատիկի (և այլ մթերքների) ավելցուկի արժեքը, գրելով «այդ թվում 1938 թ. յեկամտի մեջ մտցրած 1937 թ. բերքի հացահատիկի (և այլ մթերքների) արժեք . . . ռուբլի»։

11. 8-րդ սյունյակում տրվում են տեղեկությունները կոլտնտեսության կողմից պարտադիր կարգով և կոնտրակտացիոն պայմանագրերով հանձնած մթերքների քանակի մասին, այդ տեղեկությունները վերցրվում են՝ պետությանը հանձնումների և կոլտնտեսային առևտրի հաշվառման գրքից (ձև № 5) ընդվորում

7-րդ աղյուսակի 8-րդ սյունյակում գրանցվում է հանձնած մթերքների փաստացի (և ոչ թե հաշված) քաշը, այսինքն «հանձնված է» սյունյակում գրանցվում է տարեկան հանրագումարը ձև № 5։ Պարտադիր կարգով հանձնած մթերքների հաշված քաշը ցույց է տրվում կոլտնտեսության տարեկան հաշվետվության 7-րդ աղյուսակի ներքևում։

12. 9-րդ սյունյակում տրվում են տեղեկություններ ՄՏԿ-այանի կողմից կոլտնտեսության համար կատարած աշխատանքների դիմաց վճարած (բնավարձ) մթերքների փաստացի (և ոչ թե հաշված) քաշը։ Տեղեկությունները վերցվում են № 17/2 հաշվից (կամ 16/1 հաշվից) անալիտիկ հաշվառման տվյալներով։

13. 10-րդ սյունյակում ցույց է տրվում այն մթերքների քանակը (փաստացի քանակը և ոչ թե հաշված) որը կոլտնտեսությունը հանձնում է սերմվարկեր մարելու համար։ Այդ տեղեկությունները վերցրվում են 17/2 հաշվի անալիտիկ հաշվառման տվյալներով։ Կոլտնտեսության կողմից ստացած մթերային վարկերի վերադարձումը 10-րդ սյունյակում չի մացվում (նրանց մարումը կատարվում է ի հաշիվ աշխորերի համար նախատեսված մթերքներից, որը ցույց է տրված 18-րդ սյունյակում)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 11, 13 և 14 ԿԵՏԵՐԻ ԱՌԹԻՎ.—Ցեթե որևէ պատճառով կոլտնտեսությունը առ 1 հունվարի 1939 թ. պետության հետ դեռ լրիվին չի փակել հաշիվները պարտադիր հանձնումների և վարկերի վերադարձման կամ ՄՏԿ-այանի հետ բնավարձի գծով, ապա սյունյակներում պետք է ցույց տրվի այն բոլոր մթերքների քանակը, որը կոլտնտեսությունը 1938 թ. բերքից պետք է հանձներ պետությանը, վերադարձներ սերմվարկը, կատարեր կոնտրակտացիոն պայմանագրերով իր պարտավորությունը և 1938 թ. բերքից վճարեր ՄՏԿ-այանի բնավարձը վերջինիս՝ կոլտնտեսության համար կատարած աշխատանքների դիմաց։ Սակայն յեթե կոլտնտեսությունը մինչև 1939 թ. բերքը որևէ պարտավորության գծով վճարման ժամկետների յերկարաձգում է ստացել, ապա այս դեպքում հաշվետվության մեջ պետք է ցույց տրվի միայն 1938 թ. բերքից հանձնման յենթակա մթերքների քանակը (այսինքն, դուրս գալով հանձնման ժամկետի յերկարաձգված մասը)։

Այդպիսի դեպքերում, մթերքների այն քանակը, որն առանձնացրվել է 1938 թ. բերքից, սակայն դեռ չի հանձնվել, պետք է ձևակերպվի կոլտնտեսականների ընդհանուր ժողովի որոշումով։ Այդ որոշման հիման վրա № 5 ձևով

(պարտադիր հանձնումների և կոնտրակտացիայի գծով) և № 11 ձևով (բնավարձի և վարկերի գծով) նախավերջին տարեկան հանրագումարից առաջ) հոդվածով պետք է արվի համապատասխան ձևակերպում. «առանձնացրված է, սակայն դեռ չի հանձնած»:

14. 11, 12 և 13 սյունյակներում՝ գյուղատնտեսական արտելի կանոնադրության 11-րդ կետի համաձայն տրվում են՝ կոլտնտեսային առևտրի ասպարիզում կոլտնտեսության մասնակցության վերաբերյալ տեղեկությունները: 11-րդ սյունյակում «Փաստորեն վաճառված և պետմթերողներին կոլտնտեսային առևտրի կարգով» և 12-րդ սյունյակում «փաստորեն վաճառված և կոլտնտեսային շուկայում և այլ վաճառք» տեղեկությունները տրվում են առ 1 հունվարի 1939 թ. փաստորեն վաճառած մթերքների քանակի մասին, իսկ 13-րդ սյունյակում այն մթերքների քանակի մասին, վորը կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից առանձնացրվել է պետմթերողներին կոլտնտեսային առևտրի կարգով և կոլտնտեսային շուկայում (փաստացի վաճառքից ավելի) վաճառելու համար, սակայն դեռ չի վաճառված:

Փաստացի վաճառած մթերքների քանակը վերցրվում է № 9 գրքից «Պետական հանձնումների և կոլտնտեսային առևտրի հաշվառման գիրք» և հենց 11-րդ սյունյակի համար վերցրվում է տարեկան հանրագումարը «Վաճառք պետմթերողներին և կոոպերացիային» սյունյակից, իսկ 12-րդ սյունյակի համար տարեկան հանրագումարը վերցված է «Վաճառք կոլառևտրի կարգով» սյունյակից № 5 գրքով: (Այդ սյունյակում պետք է ցույց տրվեն և այն մթերքները, վորոնք ծախվել են հասարակական սննդի նպատակով, յեթե նրանք նատուրայով ըստ աշխօրերի բաշխման մեջ հաշվի չեն առնվել): Մթերքների այն քանակը, վորն առանձնացրվել է վաճառքի համար, սակայն փաստորեն առ 1 հունվարի 1939 թ. դեռ չի վաճառված (սյունյակ 13), ցույց է տրվում կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշման հիման վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վարձու մասնագետների աշխատանքը նատուրայով վարձատրելու դեպքում, նրանց տըրված մթերքների քանակը պետք է ցույց տալ, վորպես վաճառք (12 կամ 13 պունկտում):

15. 14, 15 և 16 սյունյակներում ցույց է տրվում կոլտըտեսականների ընդհանուր ժողովի կողմից սերմացույի և անձեռ-

նամխելի սերմֆոնդերի համար առանձնացրված մթերքների քանակը (սյուն. 14) անասնակերի և ապահովագրական կերի ֆոնդերը (սյուն. 15), այսինքն ծախքեր, վորոնք նախատեսնված են գյուղատնտեսական արտելի կանոնադրության 11-րդ կետի «բ» յենթակետով, ինչպես և հաշմանդամներին ոգնելու, մանկամսուրներին և վորբերին պահպանելու ֆոնդեր և այլն, այդ պահանջների համար առանձնացված մթերքների քանակը պետք է վերցվեն յեկամուտների բաշխման վերաբերյալ՝ կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշումից։

Ընդամենը պետք է նկատի ունենալ, վոր 14 և 15 սյունյակներումը ցույց է տրվում մթերքների այն քանակը, վորը առանձնացված են 1938 թ. բերքից, սերմերի և ֆուրաժի ֆոնդերը և մթերքների այն քանակը, վորը առանձնացրված է 1938 թ. բերքից անձեռնամխելի ապահովագրական սերմային և ֆուրաժային ֆոնդերը լրացման համար, բայց ապահովագրական ֆոնդերի վոչ ամբողջ գումարը։

Այն դեպքում, յերբ կոլտնտեսությունները միջկոլխոզային փոխանակման կարգով շարքային սերմերի դիմաց ստանում են տեսակավոր սերմեր շարքային սերմերի ավել վճարածը՝ ցույց պետք է տալ 14 սյունյակում, իսկ ավել ստացող կոլտնտեսությունը դա ցույց է տալիս 7-րդ աղյուսակի ծանոթության մեջ։

16. 17-րդ սյունյակում «այլ ծախքերը» ցույց են տրըվում այսպիսի ծախքեր, ինչպես որինակ՝ կոլտնտեսության ներքին կարիքների համար պարաններ և պարկեր պատրաստելու նպատակով կանեփաթելի ծախսումը մթերքների կորուստը՝ փչանալու չորանալու հետևանքով, այդպիսի մթերքների համար դուրս գրման ակտեր լինելու դեպքում։

Այս սյունյակը լրացնելու համար, հարկավոր է անհրաժեշտ քաղվածքներ հանել 12 հաշվից (պարաններ, պարկեր և այլն՝ պատրաստելու համար ծախսված հումույթի մասով) և 15 հաշվից (կորստի մասով)։

17. 18-րդ սյունյակում պետք է ցույց տրվի կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից վորոշված՝ կոլտնտեսականներին ըստ աշխորերի բաշխվող մթերքների քանակը։ Ընդվորում այդ սյունյակում պետք է ցույց տալ մթերքների ամբողջ քանակը, ներառյալ կոլտնտեսականներին տրված ավանսը (կոլտնտեսականներին ավանսով տրված մթերքների քանակը ցույց է տրվում վերջին՝ 19-րդ սյունյակում, 1938 թվին կոլտնտեսա-

կանների հետ ունեցած հաշվարկների շրջանառության տեղեկագրի հիման վրա), այլ վոչ թե միայն այն, ինչ վոր հասնում է վերջնական հաշվով։ Այդ տվյալները վերցվում են յեկամուտների բաշխման վերաբերյալ կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշումից։

18. Համախառը բերքից վոչ մի չհաշված մնացորդ լինել չի կարող, նրա յուրաքանչյուր կիլոգրամը պետք է վորոշակի նպատակի հատկացվի։ Ուստի բաշխման բոլոր հոդվածների գումարը (8-ից մինչև 18 սյունյակը ներառյալ) պետք է անպայմանորեն հավասար լինի 6-րդ սյունյակում նշված համախառը բերքին, բացառությամբ այն մթերքների, յերբ կոլտնտեսությունը մթերքներ է ստանում նաև դրսից, որինակ՝ կոլտնտեսության կողմից (բայց վոչ կոլտնտեսականների կողմից) կատարած աշխատանքների դիմաց տրված վարձը, հացամթերումների հաշվին հանձնած յերեքնուկի, քունջութի և այլն սերմացուի դիմաց ստացված հացահատիկը։ Բոլոր այս մթերքները 1938 թ. բերքի բաշխման ժամանակ անպայմանորեն մտցվում են բաշխման մեջ և այս դեպքերում բաշխման հոդվածներով (8-ից մինչև 18 սյունյակների ներառյալ տվյալների գումարը) ավելին կլինի համախառը բերքից և հենց դրսից ստացած մթերքների քանակի չափով։ Այսպիսի դեպքերում աղյուսակի ծանոթության մեջ անպայման պետք է ցույց տրվի բաշխման մեջ մտցրած 1938 թ. համախառը բերքից ավելի մթերքների քանակը։

## Աղյուսակ 8 «Պտղատու յեվ հատապտղային տնկարանների ու խաղողի այգիների տարածությունները, համախառը բերքը յեվ նրա բաշխումը»

1. Աղյուսակում պետք է տեղեկություններ տրվեն այգիների, հատապտղարանների (ներառյալ նաև յելակի տնկումը), խաղողի այգիների և մերձարևադարձային բույսերի մասին, ընդվորում տունկի յուրաքանչյուր տեսակի նկատմամբ (խնձորենի, տանձենի և այլն) տեղեկությունները պիտի գրանցվեն առանձին տողով։ ՎԱՅՐԻ ԾԱՌԵՐԻՑ ՅԵՎ ԹՓԵՐԻՑ ՍՏԱՑԱԾ ԲԵՐՔՆ ԱՅՍ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ՑՈՒՅՑ Ե ՏՐՎՈՒՄ, առանձին նշումով («վայրի ծառերից հավաքած»)։

Յեթե կոլտնտեսությունն ունի հատապտղային տնկարան և կոլտնտեսությունից դուրս տնկիների վաճառքով է զբաղվում, ապա այդ տնկարանը պետք է գրանցվի առանձին

տողով ցույց տալով 6-րդ սյունյակում «Համախառը բերքը» 1938 թ. ընթացքում ստացած տնկիների քանակը (հարյուրներով), իսկ 7-րդ սյունյակում այդ նյութի արժեքը։

2. Աղյուսակը ուր նշված է տնկելուն վերաբերվող մասը (սյուն. 2—5) լրացվում է ինվենտարային գրքի հիման վրա, իսկ դեռ շահագործման չհանձնված պտղատու և հատապտղային տնկիների նկատմամբ, այսինքն, պտղատվության հասակի չհասած, առ 1 հունվարի 1939 թ. ինվենտարիզացիոն ցուցակների տվյալներով։

3. Համախառը բերքը և նրա արժեքը (սյուն. 6 և 7) հաշվի յեն առնվում նույն այն կարգով, ինչպես պտղաբուծության մթերքների նկատմամբ։

4. Համախառը բերքի արժեքի հանրագումարը պետք է համեմատության դրվի № 19 հաշվի №1 յենթահաշվի № 3 օժանդակ հաշվով գրանցած համախառը բերքի արժեքի հետ և չհամընկնելու դեպքում այդ և մյուս տվյալները պետք է ստուգվեն։

5. Փաստացի վաճառքների վերաբերյալ տվյալները (սյուն. 8 և 9) ցույց են տրվում № 17 հաշվի 2 և 3 յենթահաշիվների տվյալների հիման վրա (№ 5 գրքից «Պետությանը հանձնումները և կոլտնտեսային առևտրի հաշվառում»)։ Վաճառքի համար առանձնացված, սակայն մինչև 1/I 1939 թ. դեռ չվաճառված մթերքների քանակը (սյուն. 10) և ըստ աշխօրերի բաշխվող մթերքների քանակը (սյուն. 12) վերցվում է՝ յեկամուտները բաշխելու վերաբերյալ կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշումից։

Վերամշակման հանձնած մթերքների քանակի վերաբերյալ տվյալները (սյուն. 11) վերցվում են № 12 հաշվից, իսկ 13 սյունյակի համար «Այլ ծախսեր» 15/2 հաշվից։

Ընդորում աղյուսակի ծանոթության մեջ ցույց է տրվում վերամշակման հանձնած մթերքների արժեքը։

6. Յեթե կոլտնտեսությունը մթերքների մի մասը բաշխում է վերամշակած ձևով, ապա այդ բաշխումը ցույց է տրվում առանձին տողերով։ Վերամշակումից ստացած արտադրանքի քանակը ցույց է տրվում «Համախառը բերք» սյունյակում։

### Աղյուսակ 9 «Կոլտնտեսության առկա մթերքների քանակը առ 1/I 1939 թ.»

Աղյուսակը լրացնում է ինվենտարիզացիայի տվյալների հիման վրա, համեմատելով № 3 հաշվի տվյալների հետ, ընդո-

րում նրանում ցույց է տրվում ամբողջ մթերքների առկա քանակը առ 1/I 39 թ. հաշվի առնելով և այն մթերքները, վորը սպասվում են ստանալու վերամշակումից (չկալվածից)։

## Աղյուսակ 10 «Կոլտնտեսության ամրացված հողի յեվ կոլտնտեսականների անձնական օգտագործման բանջարաբուծության, պտղատու յեվ խաղողի այգիների համար առանձնացրած հողեր»

Առաջին հարցի առթիվ պետք է նշել հողն առհավետ օգտագործելու համար ակտ ստանալու ամիսը և ամսաթիվը ու տարին։ Յեթե ակտ չի ստացվել, ապա պետք է գրել «չի ստացված», 2-րդ հարցում նշվում է կոլտնտեսությանը պետական ակտով ամրացված հողերի ընդհանուր տարածությունը (հետագա կրճատումների հետ միասին), իսկ ակտը բացակայելու դեպքում կոլտնտեսության կողմից փաստորեն օգտագործվող հողերի ընդհանուր տարածությունը։ 3-րդ հարցում տեղեկություններ պետք է տրվեն կոլտնտեսականների տնտեսությունների թվի մասին, վորոնց անձնական օգտագործման համար բանջարանոցի, պտղատու և խաղողի այգիների համար հող է հատկացրվել, գյուղատնտեսական արտելի կանոնադրության համաձայն և նրանց համար առանձնացրած հողի քանակի մասին։ Ընդվորում հարկավոր է նկատի ունենալ, վոր կոլտնտեսականներին անձնական օգտագործման համար տրված հողի կազմի մեջ շենքերի տարածությունը չի մտնում։

## Աղյուսակ 11 «Անասնապահության զարգացման պետական պլանի կատարումը»

1. Առ 1/I 1938 թ. (սյուն. 3) և առ 1/I 1939 թ. (սյուն. 5) անասունների առկա քանակը, ցույց է տրվում համապատասխան թվականի համար կազմված ինվենտարիզացիոն ցուցակներով, իսկ 4-րդ սյունյակի համար պլանային գլխաքանակի վերաբերյալ տվյալները վերցրվում են կոլտնտեսության կողմից ստացած պետական պլանով։

Ավանսի կարգով 1939 թ. մասմթերման հաշվին հանձնած անասունների քանակի վերաբերյալ տվյալները ցույց են տրվում Զագոտսկոտի անդորրագրերով։

2. 2-րդ տողով «այդ թվում կովեր» (առանց յերինջների)

պետք է ցույց տրվեն բոլոր կովերը, սակայն կովերի թվի մեջ չպիտի մտնեն յերինջները, այսինքն առաջին անգամ ծածկվածները (և վոչ թե ստերջ կովերը)։

3. Ստուգելու համար, թե պետական պլանով կատարված է արդյոք այս կամ այն տեսակի (և խմբի) անասունների առաջադրանքը, 4-րդ սյունյակի տվյալները պետք է համեմատության դրվեն 5 և 6 սյունյակների տվյալների գումարի հետ։

## Աղյուսակ 12 «Կոլտնտեսային ֆերմաների համար խոշոր յեղջուրավոր անասունների գնման պետական պլանի կատարումը

Աղյուսակում տրվում են տեղեկություններ կոլտնտեսային ապրանքային ֆերմաների համար խոշոր յեղջուրավոր անասունների գնման (առանց տոհմային անասունների գնման) պետական պլանի կատարման վերաբերյալ։

## Աղյուսակ 13 «Անասունի հանձնում յեվ վաճառք»

1. Այս աղյուսակում հաշվի յե առնվում մսամթերման տված և կոլտնտեսականներին վաճառած, պետմթերողներին, կոոպերացիային և կոլտնտեսային առևտրի կարգով վաճառած անասունների (կենդանի քաշով) իրացումից ստացված դրամական հասույթը։ Ընդվորում 4—6 սյունյակներում տեղեկություններ են տրվում անասուններ աճեցնելու համար ոգնության կարգով կոլտնտեսության ապրանքային ֆերմայից կոլտնտեսականներին անասուններ վաճառելու մասին, այդ վաճառքի պետական պլանի համաձայն։

Վաճառած անասունների քանակի և վաճառքից ստացած գումարը ցույց է տրվում, անկախ նրանից դրամը կոլտնտեսության դրամարկղումն է մուտք յեղել, կամ ընթացիկ հաշվում, թե դեբիտորների վրա յե հաշվում։ Այդ աղյուսակը լրացնելու համար բոլոր տվյալները վերցվում են «Հանձնում, անասունի մորթում և վաճառք մորթվածք մթերքների» № 18 հաշվի № 3 յենթահաշվի կրեդիտից, այդ յենթահաշվի անալիտիկ յենթահաշիվներով։

## Աղյուսակ 14 «Կոլտնտեսականների ապահովվածությունն անասուններով անձնական օգտագործման համար»

*1. Աղյուսակի առաջին հարցում հարկավոր է տեղեկություններ տալ այն մասին, թե առ 1/I 1939 թ. կոլտնտեսականների առկա տնտեսություններից քանիսը ունեն խոշոր յեղջերավոր անասուն, քանիսը խոզեր և առկա կոլտնտեսականների տնտեսություններից, քանիսն ունեն այծ և ոչխար: Ընդվորում անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր այս կամ այն տեսակի անասուն ունեցող առկա տնտեսությունների թիվը, չպետք է մեծ լինի 2 աղյուսակի 6-րդ սյունյակում նշված առկա տնտեսությունների թվից:*

*2. Աղյուսակի 2-րդ հարցում ցույց է տրվում վոչ մի անասուն չունեցող առկա տնտեսությունների (ընտանիքավոր և միայնակ) թիվը:*

*3. Անասուն ունեցող և չունեցող տնտեսությունների թվի մասին տեղեկությունները վերցվում են № 35 ձևով և համեմատվում են գյուղխորհրդի տվյալների հետ:*

## Աղյուսակ 15 «Անասնապահության մթերքների բաշխումը»

*1. Այս աղյուսակում պետք է ցույց տրվի, թե կոլտնտեսությունն իր տնտեսությունից 1938 թվին, վորքան և ինչպիսի անասնապահական մթերքներ է ստացել և ինչ գումարի (պետմթերման գներով) անասնապահության մթերքների պետական պարտադիր հանձնումն ինչ չափով է կատարել նա (սյուն. 5) և կոլտնտեսությունն ինչ նպատակի յե ծառայեցրել մթերքների մնացած մասը (սյուն. 6—13) ընդվորում 1—6-րդ տողերում ցույց է տրվում տեղեկություն մորթված մթերքների մասին, իսկ 7-րդ տողից մինչև 14-ը մորթվածք մթերքների հետ կապ չունեցող մթերքների մասին: Իսկ 15-րդ տողից մինչև 20-ը տեղեկություններ է տրվում վերամշակումից ստացված արտադրանքի մասին:*

*2. «Իր տնտեսությունից տարվա ընթացքում ստացել է հում և վերամշակված դրությամբ» սյունյակում պետք է ցույց տրվի յուրաքանչյուր մթերքի ամբողջ քանակը, բաց չթողնելով վոչ մի կիլոգրամ կամ հատ:*

*3. Իր տնտեսությունից տարվա ընթացքում ստացած մորթվածքի մթերքների և նրանց արժեքի վերաբերյալ տվյալները վերցվում են № 18/3 հաշվից:*

4. Իր տնտեսությունից տարվա ընթացքում մուտք յեղած կաթի քանակի և նրա արժեքի և կաթի վերամշակման հետեվանքով ստացած կաթնամթերքների արժեքի վերաբերյալ տվյալները վերցվում են № 3 ձևից «Նատուրալ յելքամուտների և նրանց հաշվառման գիրք»։

Ընդվորում հարկավոր է նկատի ունենալ, վորպեսզի մթերքի միևնույն քանակը կրկնակի վերամշակման դեպքում հաշվի չառնվի յերկու անգամ. որինակ՝ 10 ցենտներ կարագը հալած յուղի վերածելիս՝ չի կարելի տարեկան հաշվետվության մեջ գրել և կարագ և հալած յուղ, քանի վոր այդ հանգամանքը կրկնակի հաշվառման կհասցնի այլ հարկավոր է գրել միայն հալած յուղը։

Սեպարատորից հանված թան ու շիճուկը (обрать) հաշվի չի առնվում «այլ կաթնամթերքներ» տողում։ Անհրաժեշտ է հետևել, վորպեսզի յուղ և պանիր պատրաստելու նպատակով վերամշակման տված կաթի քանակի և վերամշակումից դուրս յեկած այդ մթերքների քանակի միջև համապատասխանություն լինի։ 7-րդ տողում պետք է ցույց տրվեն միայն կովի կաթի վերաբերյալ տեղեկությունները. վոչխարի և այծի կաթի վերաբերյալ տեղեկությունները պետք է տրվեն ութերորդ տողով։

5. Իր տնտեսությունից տարվա ընթացքում ստացված բրդի, մեղրի, մեղրամոմի և այլնի քանակի վերաբերյալ տեղեկությունները նույնպես վերցվում են № 3 ձևի գրքից։

6. 5-րդ սյունյակը մորթվածքի մթերքների մասին լրացվում է մթերող կազմակերպությունների անդորրագրերի հիման վրա, իսկ արտադրանքի նկատմամբ (կաթ, բուրդ և այլն) № 17 հաշվի «Արտադրանքի իրացում» № 1 յենթահաշվի անալիտիկ հաշվառման տվյալների հիման վրա (№ 5 ձևի գրքից)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե պարտադիր հանձնումների պլանը տրված է մեկ տեսակի մթերքի համար, իսկ հանձնումը կատարված է այլ տեսակի մթերքներով, որինակ՝ պլանը տրված է կաթի համար, իսկ հանձնումը կատարված է յուղով, ապա փաստացի հանձնումը պետք է ցույց տալ յերկու թվով համարիչով՝ փաստացի հանձնած մթերքի քանակը, իսկ հայտարարով մթերքի վերածած պլանում նշված քանակը։

7. 6 և 7 սյունյակները «վաճառված է կոլտնտեսային առևտրի կարգով» պետությանը տրված մորթվածքի մթերքների

գծով լրացվում են № 3 հաշվի անալիտիկ հաշվառման տվյալների հիման վրա, իսկ կաթի, բրդի և այլն արտադրանքի նկատմամբ՝ № 17 հաշվի 2 և 3 յենթահաշիվների անալիտիկ հաշվառման տվյալների հիման վրա (№ 5 ձևի գրքից)։

8. 8-րդ սյունյակում ցույց է տրվում վաճառքի համար առանձնացրած, սակայն առ 1 հունվարի 1939 թ. դեռ չվաճառած մթերքների քանակը։ Այդ տվյալները վերցվում են կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշման հիման վրա։

9. 9-րդ սյունյակը «ծախսված և հասարակական սննդի համար» լրացվում է կամ № 25 կամ № 19 ձևի տվյալների հիման վրա, նայած թե ինչպես է տարվել սննդի հաշվառումը կոլտնտեսության մեջ։ Սակայն և այս և մյուս դեպքում հարկավոր է հետևել այն բանին, վորպեսզի այս սյունյակում ցույց տրվեն միայն սեփական տնտեսությունից ստացած մթերքները, իսկ գնված մթերքներն այստեղ ցույց չեն տրվում։ Տրակտորիստների սննդի համար սեփական տնտեսությունից ծախսված մթերքներն այս սյունյակում անպայմանորեն ցույց են տրվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—15-րդ աղյուսակի 3-րդ տողում (ամեն տեսակի) կաշիներ, 9-րդ սյունյակում «ծախսված հասարակական սննդի համար» չեն լրացվում։

10. 10-րդ սյունյակը «Առանձնացված և ֆոնդ հաշմանդամներին ոգնելու համար» լրացվում է յեկամուտների բաշխման վերաբերյալ վորոշման հիման վրա։

11. 11-րդ սյունյակում «ծախսված և արտադրական կարիքների համար» պետք է ցույց տրվեն այնպիսի ծախքերը, ինչպես որինակ՝ կաթի ծախսումը հորթերին և գառներին խմեցնելու համար, մսի ծախսումը պահապան շներին կերակրելու համար, ձվի ծախսումը ճուտ ստանալու համար, մեղրի ծախսումը, մեղվի ընտանիքներին կերակրելու համար և այլն։ Այս ծախքերի վերաբերյալ տվյալները վերցվում են № 14 հաշվի «ծախսեր արտադրության մեջ» 1, 2 և 3 յենթահաշիվների անալիտիկ հաշիվների տվյալներով։

12. 12-րդ սյունյակը «Հանձնված և վերամշակման» լրացվում է № 12 հաշվի «Տարբեր արդյունաբերական և ոժանդակ ձեռնարկների մեջ» անալիտիկ հաշվառման տվյալների հիման վրա։ Այստեղ ըստ մթերքի յուրաքանչյուր տեսակի պետք է ցույց տրվի թե այդ մթերքից ամբողջ 1938 թ. ընթացքում, վորքան է հանձնվել վերամշակման։

13. 13-րդ սյունյակը «Բաշխում ըստ աշխօրերի» լրացվում է յեկամուտների բաշխման վերաբերյալ կոլտնտեսականների ընդհանուր ժողովի (տարեկան հաշվետվությունը հաստատող) վորոշման հիման վրա։

14. Տարվա ընթացքում ստացված մթերքների գումարը պետք է հավասար լինի ծախսված մթերքների գումարին, քանի վոր ստացված արտադրանքն առանց մնացորդի պետք է բաշխվի 15 աղյուսակում նշված ծախքերի հոդվածների միջև։

15. Աղյուսակի վերջում պետք է տրվի անասնապահության հիմնական մթերքների պետհանձնումների պլանը. անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչ չափով է տրվում այն ցենտներով, թե տոննով։ Վերամշակման անցած կաթի արժեքը պետք է տրվի պետական գներով։ 15-րդ հոդվածի վերջին մասում տեղեկություններ են տրվում կաթի, բրդի և անասնապահության այլ մթերքների հանձնման պլանի մասին ամբողջ 1938 թ. ընթացքում։ Յեթե առ 1 հունվարի 1938 թ. կոլտնտեսության վրա մնում է հանձնման պարտք 1937 թվից, վորը պետք է մարեր 1938 թ., ապա այդ պարտքը ցույց է տրվում առանձին տողով։

16. Այն մարզերի կոլտնտեսությունները, վորտեղ գործող որենսդրությամբ անասունների մի մասը կարող է նատուրայով բաշխվել ըստ աշխօրերի, ըստ աշխօրերի տրված անասունը ցույց է տրվում 15 աղյուսակում այսպես՝ 3 և 13 սյունյակներում ըստ աշխօրերի բաշխած գլուխների քանակը, իսկ 4-րդ սյունյակում նրանց արժեքը։ Անասունի յուրաքանչյուր տեսակի համար աղյուսակում առանձնացվում է առանձին տող։

## Աղյուսակ 16 «Մսի հանձնման պլանի կատարումը»

Մսի հանձնման պլանի վերաբերյալ տվյալները լրացվում են, մսի հանձնելու առթիվ կոլտնտեսության տված պարտավորագրով, իսկ փաստացի հանձնածի վերաբերյալ տվյալները Զագոտսկոտի անդորրագրերի հիման վրա։

## Աղյուսակ 17 «Կոլտնտեսության յեկամուտները, անասնապահության, բուսաբուծության յեվ ոժանդակ ձեռնարկների մթերքների վաճառքից»

Աղյուսակն արտադրանքի մասով (տող 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 11) լրացվում է № 17 հաշվի «Արտադրանքի իրացում» տվ-

յաների հիման վրա (№ 5 ձևի գրքից «Պետական հանձնումների և կոլտնտեսային առևտրի հաշվառում»)։ Ընդվորում սյունյակ 2, 4 և 6 (գնահատումը մուտք արման գներով) լրացնելու համար տվյալները վերցվում են հաշվի դեբետից, իսկ 3, 5 և 7 սյունյակների համար հաշվի կրեդիտից։

Վաճառքի (կամ պետությանը հանձնելու) համար առանձնացրած արտադրանքը բայց դեռ չվաճառված այս աղյուսակում ցույց չի տրվում։

2. ՄՍԱՄԹԵՐՔՆԵՐԻ նկատմամբ 2, 4 և 6 սյունյակներում ցույց է տրվում վաճառված մթերքների արժեքը մուտք արված գներով։ Այս տվյալները վերցվում են № 3 հաշվի կրեդիտից քաղվածքներ անելու միջոցով. 3, 5 և 7 սյունյակները լրացնելու համար հարկավոր է նախորոք քաղվածքներ անել 18 հաշվի 3 յենթահաշվից, մսամթերքների վաճառքից գոյացած յեկամուտի մասին (№ 3 հաշվում մուտք արված գներով, վաճառած մթերքների գնահատման և փաստացի գներով վաճառած մթերքների արժեքի միջև յեղած տարբերությունն) առանձին։

ա) Պետությանը պարտադիր կարգով վաճառքից.

բ) Ըստ պայմանագրերի արտադրանքի վաճառքից։

գ) Կոլտնտեսային շուկայում արտադրանքի վաճառքից։

Այսպիսով, ստացված գումարներին անհրաժեշտ է ավելացնել մուտք արված գներով վաճառված մթերքների (յուրաքանչյուր տեսակի վաճառքից) արժեքը, այսինքն այն գումարները, վորոնք գրանցված են 2, 4 և 6 սյունյակներում և արդյունքը գրել համապատասխան՝ 3, 5 և 7 սյունյակներում։

3. Մթերքների վաճառքից գոյացած յեկամուտը (սյուն. 8) ստացվում է՝ մի կողմից 3, 5 և 7 սյունյակների տվյալների գումարի և մյուս կողմից 2, 4 և 6 սյունյակների գումարի միջև յեղած տարբերության միջոցով։

4. Ոժանդակ ձեռնարկների վոչ գյուղատնտեսական արտադրանքին (տող 11) տվյալ դեպքում վերաբերում է ինվենտարը, շինարարական նյութը և այլն։ Սրան է վերաբերում նաև աղունավարձը։ Ալյուրի ձավարի և այլնի վաճառքը 11 տողով ցույց չի տրվում (այլ անցնում է 1 տողով)։

## Աղյուսակ 18 «Ոժանդակ ձեռնարկների յեկամուտներ յեվ ծախսերը»

1. Այս աղյուսակում տեղեկությունները տրվում են կոլ-

տնտեսության բոլոր օժանդակ ձեռնարկների նկատմամբ, ինչպիսիք են ջրաղացը, ձավարաղացը, ձիթհանքը, յուղի-պանրի գործարանները, փուռը բանջարեղեն վերամշակող ձեռնարկը և այլն ձեռնարկներ՝ դարբնոց, հյուսնոց և այլ արհեստանոցներ, շինարարական նյութեր պատրաստող ձեռնարկներ (աղյուսի, կղմինդրի և այլ գործարաններ), կոլտնտեսության կողմից գործադրվող փայտամշակման, քարհանքի, տորֆի, և կոլտնտեսականների կենցաղը սպասարկող ձեռնարկները (ճաշարաններ, լվացքատներ, վարսավիրանոցներ և այլն):

ա) Բացի այս աղյուսակում տեղեկություններ են տրվում առանց հատուկ վերամշակող ձեռնարկում արտադրանքի վերամշակման մասին, օրինակ՝ հատապտուղների, պտուղների և բանջարեղենի չորանոցները և կոնսերվացնելը, կաթի, յուղի և այլ արտադրանքի վերամշակումը և այլն:

բ) Դրսում արտադրանքը վերամշակելու մասին (կետ 9) օրինակ՝ հարևան կոլտնտեսության ալրաղացում հացահատիկն աղալու մասին և

գ) ձկնորսությունից ստացած յեկամուտի մասին (լճային տնտեսություն): Սակայն ծղոտի և վուշի ու կանեփի տրեստայի վերամշակումն այս աղյուսակում ցույց չի տրվում:

2. Տեղեկությունները պետք է տրվեն յուրաքանչյուր ձեռնարկի յուրաքանչյուր վերամշակման համար առանձին այնպես, որ յեթե կոլտնտեսությունն ունենա յերկու ալրաղաց, ապա տեղեկությունները պետք է տրվեն նրանցից յուրաքանչյուրի համար առանձին:

Առանձին տեսակի ձեռնարկների նկատմամբ յեկամուտի և ծախքերի մասով (սյուն. 2—7) աղյուսակը լրացվում է հետևյալ կարգով.—

Ա. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՈՒՅԹ ՎԵՐԱՄՇԱԿՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (ինչպես օրինակ՝ ջրաղացների, ձավարաղացների, ձիթհանքների, յուղագործարանների, հացի փուռերի նկատմամբ և այլն) տեղեկությունները տրվում են այսպես.—

ա) իր տնտեսությունից ստացված գյուղատնտեսական հումույթը վերամշակելիս (իր ձեռնարկներում և դրսում), լրացվում են՝ 2, 4, 6 և 7 սյունյակները, ընդվորում 2 սյունյակով ցույց է տրվում վերամշակման հետևանքով ստացված մթերքների արժեքը (օրինակ՝ ալյուրի, թեփի, յուղի, քուսպի և այլն), այդ մթերքները մուտք արած գներով:

բ) Գնված գյուղատնտեսական հումույթը վերամշակելիս (իր ձեռնարկներում և թե դրսում) լրացվում են՝ 2, 5, 6 և 7 սյունյակները, ընդ որում 2-րդ սյունյակը լրացվում է այնպես, ինչպես առաջին դեպքում.

գ) Ոչ կոլտնտեսությանը պատկանող գյուղատնտեսական հումույթ վերամշակելիս (օրինակ՝ կոլտնտեսականների կամ այլ կոլտնտեսության հացահատիկի վերամշակումը) լրացվում են միայն 2, 6 և 7 սյունյակները, ընդ որում 2-րդ սյունյակում ցույց է տրվում միայն վերամշակման համար կոլտնտեսության կողմից ստացած վարձը և ոչ թե վերամշակումից ստացված մթերքների արժեքը։

4, 5, 6 և 7 սյունյակների համար տվյալները վերցվում են յուրաքանչյուր ձեռնարկության հաշվի դեբետից (տարեկան հանրագումարը), իսկ 2-րդ սյունյակի համար առաջին երկու դեպքերում՝ յուրաքանչյուր ձեռնարկության հաշվի կրեդիտից, իսկ ուրիշի հումույթը վերամշակելիս՝ № 19 հաշվի № 6 ենթահաշվից քաղվածքներ անելու միջոցով։

Եթե ձեռնարկությունը տարվա ընթացքում վերամշակում է և իր հումույթը և գնված և ուրիշի հումույթը, ապա աղյուսակի յուրաքանչյուր սյունյակի համար անհրաժեշտ տեղեկությունները ամփոփվում են երեք տեսակի վերամշակման նկատմամբ և լրացվում են մեկ տողով։ (2-րդ սյունյակի համար հարկավոր է գումարել՝ իր և գնված հումույթի վերամշակումից ստացված արտադրանքի և վարձով վերամշակած արտադրանքի արժեքը, իսկ մնացած՝ 4, 5, 6 և 7 սյունյակների համար տեղեկությունները վերցվում են անմիջականորեն տվյալ ձեռնարկության հաշվի դեբետից, ընդ որում 4, 5 և 6 սյունյակների համար քաղվածքներ հանելու միջոցով, իսկ 7-րդ սյունյակի համար ուղղակի տվյալ ձեռնարկության հաշվի դեբետի շրջանառություններից։

18 աղյուսակի 3 սյունյակը՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակող ձեռնարկների նկատմամբ չի լրացվում։

Նույն կարգով է կատարվում 18 աղյուսակի լրացնելը գյուղատնտեսական հումույթն առանց հատուկ ձեռնարկներում վերամշակելու (օրինակ՝ պտուղների և հատապտուղների չորացնելը և այլն) և արտադրանքը դրսում վերամշակելու նկատմամբ, 3-րդ սյունյակը չի լրացվում տվյալ դեպքում։

Բ. ԲԱՑԱՌԱՊԵՍ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՁԵՌՆԱՐԿ-

ՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ (ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ, ԴԱՐԲՆՈՑ և այլն) սակայն վոչ ինվենտար և այլ շինվածքների արտադրությամբ զբաղվող ձեռնարկների մասին լրացվում է 2, 6 և 7 սյունյակները։

2-րդ սյունյակը լրացվում է № 19 հաշվի № 6 յենթահաշվի կրեդիտից քաղվածքներ անելու միջոցով, քանի վոր այդպիսի ձեռնարկների նկատմամբ յեկամուտ համարվում է միայն կոլտնտեսականների և կողմնակի անձանց ու կազմակերպությունների պատվերով արհեստանոցում կատարած նորոգման համար ստացված վարձը, վորը 1938 թ. գործող հաշվառման ցուցումներով հաշվի յե առնվել 19 հաշվում նշված 6 յենթահաշվով։

6 և 7 սյունյակները լրացվում են տվյալ ձեռնարկության հաշվի դեբետով տարեկան շրջանառության ընդհանուր գումարից քաղվածքներ հանելու միջոցով (նշանակում է 6 և 7 սյունյակների գումարը միևնույնը կլինի)։

Գ. ԱՅՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՎՈՐՈՆՔ ԶԲԱՂՎՈՒՄ ԵՆ ԲԱՑԱՌԱՊԵՍ ԻՆՎԵՆՏԱՐԻ ՅԵՎ ԱՅԼ ՇԻՆՎԱԾՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԴՐԱ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԶԲԱՂՎՈՒՄ ԵՆ ՆԱՅԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՄԲ.—տվյալ դեպքում տեղեկությունները 2—7 սյունյակներով տրվում են, յերկու տողով, մեկ տողով տրվում են տեղեկություններ իր տնտեսության համար պատրաստած ինվենտարի և այլ շինվածքների մասին և մյուս տողով բոլոր այլ աշխատանքների մասին, այսինքն, վաճառքի նպատակով ինվենտար և այլ պատրաստելու աշխատանքների և վերանորոգման աշխատանքների մասին, ինչպես իր տնտեսության, այնպես էլ վաճառքի համար։

Այսպիսի դեպքերում տեղեկություններն աղյուսակում տրվում են հետևյալ կերպ։

ա) Յեթե սեփական տնտեսության համար պատրաստած ինվենտարը և շինվածքները հաշվի յեն առնվում առանձին հաշվի մեջ (և ծախքերը և արտադրանքի յելույթը), այն ժամանակ աղյուսակը լրացնելու համար բոլոր տեղեկությունները վերցվում են այս հաշվից 2 և 3 սյունյակներում ցույց է տրվում միևնույն գումարը այս հաշվի կրեդիտով տարեկան շրջանառության հանրագումարը, 4, 5 և 6 սյունյակները լրացվում են հաշվի դեբետից քաղվածքներ անելու միջոցով, իսկ 7-րդ սյունյակներում ցույց է տրվում տարեկան շրջանառության հանրագումարն այս հաշվի դեբետով։

Ձեռնարկության մյուս աշխատանքների նկատմամբ անհրաժեշտ տեղեկությունները վերցվում են այդ աշխատանքների հաշվի ծախքերը դեբետից, իսկ համախառն յեկամուտը 2 սյունյակի համար վերցվում ե վորպես տարվա կրեդիտային շրջանառության համար, գումարած այդ աշխատանքներից ստացած յեկամուտը, վորը հաշվի չի առնվում № 19 հաշվի № 6 յենթահաշվում: 3-րդ սյունյակը չի լրացվում այս դեպքում:

բ) Յեթե տարվա ընթացքում ծախքերը և արտադրանքի յելույթը հաշվի չի առնվել ամբողջ ձեռնարկության նկատմամբ, ապա տարեկան հաշվետվությունը կազմելիս հարկավոր ե նախ՝ քաղվածք հանելու միջոցով սահմանել ինվենտարի և այլ շինվածքների վրա ծախսած հումույթի, նյութերի և այլ ծախսերի արժեքը (անկախ նրանից, թե պատրաստվել են սեփական տնտեսության կամ վաճառքի համար) և յերկրորդ, սահմանել նյութերի և այլ ծախսերի արժեքը վերանորոգման աշխատանքների նկատմամբ:

Այդ բանը կատարելուց հետո, ինվենտար և այլ շինվածքներ պատրաստելու վրա գործադրած նյութերի հումույթի և այլ ծախսերի արժեքը պետք ե բաժանվեն՝ ա) կոլտնտեսության սեփական տնտեսության համար ինվենտարի և այլ շինվածքների պատրաստման ծախսերի և բ) վաճառքի համար ինվենտարի և այլ շինվածքների պատրաստման ծախսերի:

Այդ բաժանումը կարող ե կատարվել կոլտնտեսության կարիքների համար պատրաստած շինվածքների արժեքին և վաճառքի նպատակով պատրաստած շինվածքների արժեքին համեմատական:

Օրինակ՝ տարվա ընթացքում կոլտնտեսության արհեստանոցը պատրաստել ե 30 սահնակ, վորոնք մուտք անելու ժամանակ գնահատվել են 1500 ռուբլի: Սահնակների պատրաստման վրա ծախսվել ե իր տնտեսության հումույթից 300 ռ. իսկ գնված հումույթից 600 ռուբլի գումարով և կատարված ե այլ նյութա-դրամական ծախքեր 300 ռուբլու: 30 սահնակից տնտեսության կարիքների համար թողված ե 10 հատ 500 ռուբլի գնահատումով, իսկ 1000 ռուբլի գնահատված 20 սահնակը վաճառվել ե, այսինքն, սեփական տնտեսության համար թողնվել ե արտադրանքի 1/3 մասն իր արժեքով: Այն ժամանակ բոլոր ծախ-

-քերից և վերցվում $^1/_3$-ը։ Այն ժամանակ կստանանք, որ սահ-նակների պատրաստման վրա ծախսվել է՝

| | |
|---|---|
| սեփական տնտեսության հումույթ | 300:3=100 ռ. |
| գնված հումույթ | 600:3=200 ռ. |
| այլ ծախքեր | 300:3=100 ռ. |
| Ընդամենը | 400 ռուբլի |

Իսկ վաճառելու նպատակով պատրաստած սահնակների վրա ծախսվել է՝

| | |
|---|---|
| սեփական տնտեսության հումույթ | $\frac{300.2}{3}=200$ ռուբլի |
| գնված հումույթ | $\frac{600.2}{3}=400$ ռուբլի |
| այլ ծախքեր | $\frac{300.2}{3}=200$ ռուբլի |
| Ընդամենը | 800 ռուբլի |

Բլանկի մեջ այս օրինակը գրանցվում է այսպես

| Ձեռնարկի և աշխատանքի անունը | Համախառը յեկամուտ | Այդ թվում տնտեսության կարիքների համար թողված շինվածքի արժեքը | ԾԱԽՔԵՐ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Իր տնտեսությունից ծախսված հումույթի արժեքը | Դրսից գնված հումույթի արժ. | Այլ նյութա-դրամակ. ծախք. | Ընդամ. ծախքեր |
| Հյուսնա ատաղձագործական արհեստանոց . . . . . . . . . | — | — | — | — | — | — |
| ա) սեփական տնտեսության համար պատրաստած ինվենտարը | 500 | 500 | 100 | 200 | 100 | 400 |
| բ) վաճառքի համար պատրաստ. ինվենտար և այլ նյութեր . . . | 1000 | — | 200 | 400 | 200 | 800 |

Յեթե ինվենտար և այլ շինվածքներ պատրաստող ձեռնարկության կողմից կատարվել են նաև վերանորոգման աշխատանքներ, ապա նյութերի արժեքը և վերանորոգման վրա կատարված ծախքերն 18-րդ սյունակում գրանցվում են մեկ տողով, վաճառքի նպատակով պատրաստած ինվենտարի և այլ շինվածքների վրա կատարած ծախքերի հետ միասին (ինչպես վերոհիշյալ օրինակում) «Այլ աշխատանքներ» տողում։

Այդ նույն կարգով, ինչպես և ինվենտար պատրաստող արհեստանոցների նկատմամբ, աղյուսակը լրացվում է նաև շինարարական նյութեր պատրաստող (աղյուսի և կղմինդրի գործարանները և այլն) և մշակող (փայտամշակում, տորֆի, քարի հանույթ և այլն) ձեռնարկությունների նկատմամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Աղյուսի և կղմինդրի արտադրություն լինելու դեպքում 18-րդ աղյուսակին կից հատուկ ծանոթությամբ տալ՝ վաճառքի հանված արտադրանքի համար ծախսված վառելանյութի արժեքը։ Գրանցումը պետք կատարել հետևյալ կերպ՝ «գնված վառելանյութի արժեքը, ծախսված վաճառքի հանված աղյուսի և կղմինդրի արտադրանքի պատրաստման վրա ____________ ռուբլի»։

4. Շինվածքների և այլնի արտադրանքի մասով տեղեկությունները (8—13 սյուն.) աղյուսակում լրացվում են այսպես.

ա) 8—10 սյունյակներում ըստ յուրաքանչյուր ձեռնարկության տեղեկությունները տրվում են շինվածքների գլխավոր տեսակների նկատմամբ (ալրաղացների նկատմամբ ալյուրը, ձավարաղացների նկատմամբ—ձավարը, յուղագործարանների նկատմամբ—յուղը, ինվենտար պատրաստող ձեռնարկների նկատմամբ—մեծ գումարի պատրաստած ինվենտարի քանակը և այլն (տեղեկությունները վերցվում են մթերքների և նյութերի գրքից քաղվածքներ անելու միջոցով և յուրաքանչյուր ձեռնարկության հաշվի կրեդիտից։

բ) 11-րդ սյունյակում ցույց է տրվում 1938 թ. ձեռնարկության աշխատանքների օրացույցային օրերի թիվը։

գ) 12-րդ սյունյակում ցույց է տրվում, ինչպիսի շարժիչ կա ձեռնարկությունում։

դ) 13-րդ սյունյակի համար տվյալներն ստացվում են՝ յուրաքանչյուր ամսում աշխատողների միջին թվի ամփոփումը 1938 թ. ձեռնարկության աշխատած ամիսների թվի գումարի վրա բաժանելու միջոցով։

Ընդվորում հարկավոր է նկատի ունենալ, որ աշխատած անձանց թվի մեջ պետք է մտցնել ինչպես վարձու անձանց այնպես էլ կոլտնտեսության անդամներին ձեռնարկության մեջ աշխատած կոլտնտեսության անդամներին։ Կոլտնտեսականներին տներում կազմակերպած արտադրության նկատմամբ պետք է աշխատող անձանց թվի մեջ մտցնել ինչպես տանը կազմակերպած արտադրության մեջ զբաղված կոլտնտեսության անդամ-

ներին, այնպես էլ նրանց ոգնող ընտանիքի ոգնող անդամներին։

5. Փայտամթերման վերաբերյալ հատվածում տեղեկությունները տրվում են միայն կոլտնտեսության սեփական անտառանյութի վերաբերյալ. իսկ պետական մթերողների հետ կնքած հատուկ պայմանագրերի հիման վրա։ Կոլտնտեսության կողմից կատարած մթերումներն այստեղ ցույց չեն տրվում։

Մթերած գործածվող փայտի և վառելափայտի քանակի վերաբերյալ տեղեկությունները վերցվում են մթերքների և նյութերի գրքից քաղվածքներ անելու միջոցով և փայտամշակման հաշվի կրեդիտից։

## Աղյուսակ 19 «Կողմնակի վաստակներ»

Այստեղ հաշվի չեն առնվում կոլտնտեսության յեկամուտները կողմնակի, այլ կազմակերպությունների համար կատարած աշխատանքներից (որինակ՝ բեռ փոխադրելու, բերք հավաքելու, ձյուն մաքրելու, փայտամշակում և այլն), ինչպես և կոլտնտեսականներին ցույց տված անձնական ոժանդակության համար կոլտնտեսականներից գանձվող վճարը, (որինակ՝ կոլտնտեսականի տնամերձ հողը վարելու կամ շուկա գնալու համար ձի հատկացնել և այլն)։ Աղյուսակում պետք է հաշվի առնվի կոլտնտեսության վաստակը (բայց վոչ կոլտնտեսականի) դրսում կատարած բոլոր տեսակի աշխատանքներից անկախ նրանից, թե ինչ ձևով է այդ ստացվել դրամով թե բնամթերքով։

2. Աղյուսակը լրացվում է № 19 հաշվի «Կողմնակի վաստակներ» յենթահաշվից քաղվածքներ անելու միջոցով։

## Աղյուսակ 20 «Շենքերի յեվ կառուցումների շինարարություն»

Աղյուսակում պետք է տրվեն ինչպես նոր շենքերի և կառուցումների շինարարության, այնպես էլ հիմնական վերանորոգման վերաբերյալ տեղեկություններ։ Շինարարության գծով տեղեկությունները տրվում են շենքերի և կառուցման յուրաքանչյուր տեսակի համար առանձին, պահեստների համար առանձին և այլն։ Իսկ շենքերի և կառուցումների հիմնական վերանորոգման նկատմամբ տեղեկությունները պետք է տրվեն ընդհանուր գումարով։

2. 2, 3, 4 և 5 սյունյակների համար տեղեկությունները

*վերցվում են № 13 հաշվի № 1 ցենթահաշվից (5 սյուն. համար այդ ցենթահաշվի դեբետից), իսկ 6, 7, 8, 9 և 10 սյունյակների համար նոր շինարարություն ընդունելու ակտերից։ 5 սյունյակի հանրագումարին գումարած հիմնական վերանորոգման կետ 10-ի վրա կատարած դրամանյութական ծախքերի գումարն ընդհանուր գումարով № 13 հաշվի դեբետով պետք է տան տարեկան շրջանառության գումարը։*

## Աղյուսակ 21 «Գյուղատնտեսական կարևորագույն մեքենաները յեվ գործիքները»

*Աղյուսակը կազմվում է՝ առ 1 հունվարի 1939 թ. կազմած ինվենտարային ցուցակների հիման վրա։*

## Աղյուսակ 22 «1938 թ. կատարած կարևորագույն աշխատանքները»

*1. Այս աղյուսակում տեղեկությունները տրվում են այն աշխատանքների մասին, վոր պայմանագրով ՄՏԿ-այանը կատարել է կոլտնտեսության համար և կոլտնտեսությունը կատարել է իր միջոցներով։*

*ՄՏԿ-այանի կողմից կատարած աշխատանքի ծավալի վերաբերյալ տեղեկությունները «ըստ պայմանագրի» սյունյակի համար վերցվում են ՄՏԿ-այանի հետ կնքած պայմանագրից, իսկ «փաստորեն» և «կոլտնտեսության կողմից» սյունյակների համար, աշխատանքների ընդունման հանձնման ակտերից և ՄՏԿ-այանի հաշիվներից։*

*2. Փոցխումը և կուլտիվացիան աղյուսակում տրվում են մեկ յերեսի վերածած (որինակ՝ յեթե 10 հեկտար տարածությունը փոցխվել է 4 անգամ, ապա հարկավոր է ցույց տալ վոչ թե 10 հեկտար, այլ 40 հեկտար)։*

*3. 11-րդ տողում պետք է ցույց տրվի բարելավված ամբողջ տարածությունը (այսինքն, արմատական բարելավումները և հասարակ բարելավումներ), իսկ 12-րդ տողում՝ միայն այն տարածությունը, վորը բարելավված է արմատական բարելավումներով։*

*4. Աշնանացանի համար կատարած մաքուր ցելերի կազմի մեջ (կ. 16) հարկավոր է մտցնել բոլոր վոչ զբաղված մշակվող ցելերը, ինչպես որինակ 1938 թ. գարնանը կատարված, այնպես էլ 1937 թ. աշնանից նախապատրաստած (այսպես կոչվող «սև*

ցելերը») ինչպես և աշնանացանների համար նախապատրաստած անմշակ հողերի տարածությունը։

5. 3-րդ սյունյակի 5, 8, 9, 21 տողերով տեղեկությունները տրվում են այսպես՝ համարիչով ցույց է տրվում իրեն կոլտնտեսության կողմից մշակած ամբողջ տարածությունը, իսկ հայտարարով այն տարածությունը, վորի վրա աշխատանքը կատարվել է ձեռքով (շաղացան, մանգաղով և գերանդիով հունձ և այլն, կամերով կալսում և այլն)։

6) Տեխնիկական կուլտուրաների նկատմամբ ցույց են տըրվում միայն այն աշխատանքները, վորոնք անվանված չեն 1—6 կետերում։

## Աղյուսակ 23 «Մուտք-յելքի նախահաշվի կատարում յեվ դրամական յեկամուտների բաշխումը»

1. 23-րդ աղյուսակում պետք է ցույց տրվի մուտք-յելքի նախահաշվի կատարումը դրամական յեկամուտների գծով և դրամական յեկամուտների բաշխումը։

2. Աղյուսակի մուտքի կողմում «փաստորեն» սյունյակով ըստ առանձին հոդվածների և մի շարք դեպքերում նախահաշվի հոդվածների լրացուցիչ ստորաբաժանումներով (расшифровки) ցույց են տրվում կոլտնտեսության 1938 թ. բոլոր դրամական յեկամուտները։ Ընդվորում, մուտքի յուրաքանչյուր հոդվածով ցույց է տրվում այդ հոդվածով ստացած յեկամուտի ամբողջ գումարը, այսինքն, ինչպես կոլտնտեսության դրամարկղի և ընթացիկ հաշվի 1938 թ. փաստորեն մուտք յեղած գումարը, այնպես էլ այն գումարները, վորոնք ՄՆՈՒՄ ԵՆ ԴԵԲԻՏՈՐՆԵՐԻ ՎՐԱ ինչպես և ԱՅՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎՈՐՈՆՔ ՍՏԱՑՎԵԼՈՒ ՅԵՆ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՐԱԾ, ՍԱԿԱՅՆ ԴԵՌ ՉԻՐԱՑՐԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՀԱՄԱՐ այդ գումարները մտցվում են 1938 թ. դրամական յեկամուտի մեջ, կոլտնտեսության տարեկան հաշվետվությունը կազմելու առթիվ ընդհանուր ցուցումների 4-րդ կետի համաձայն սահմանված գներով (մի ընդհանուր գումարով)։ Յուրաքանչյուր հոդվածով պետք է մտցվեն նաև այն մուտքերը, վորոնք դրամարկղով չեն անցել, սակայն այնուամենայնիվ հանդիսանում են կոլտնտեսության դրամական յեկամուտը (որինակ՝ ըստ աշխօրերի բաշխվող դրամական յեկամուտի հաշվին կոլտնտեսականներին արտադրանք վաճառելը, կոլտնտեսականներին վարձով ձի տրամադրելը կամ այլ սպասարկումը, յերբ

կոլտնտեսականի համար կատարած աշխատանքների արժեքը գրանցվում է նրանց անձնական հաշվում, դրամական յեկամուտների հաշվին ավանսավորելը և այլն)։ Այդպիսի գործառնությունները կոլտնտեսության դրամարկղով չեն անցնում, բայց նախահաշվի կատարման հաշվառման գրքում և նախահաշվի կատարման վերաբերյալ աղյուսակում պետք է անցկացվեն։

3. Ըստ տնտեսության առանձին ճյուղերի (բուսաբուծություն, անասնաբուծություն, օժանդակ ձեռնարկներ), բացի ըստ հոդվածների յեկամուտից, տրվում է և ըստ ամբողջ ճյուղերի յեկամուտի ընդհանուր գումարը (տող՝ 4, 9, 10), իսկ նրա ներքևում ցույց է տրվում, թե տնտեսության տվյալ ճյուղի դրամական յեկամուտի ընդհանուր գումարից, վորքան է ստացվելու տվյալ ճյուղի վաճառքի համար առանձնացրած (կետեր 6, 12, 14), սակայն դեռ չվաճառված արտադրանքից։

4. Բուսաբուծությունից ստացված դրամական յեկամուտներից, բացի առանձնացվում են՝ ՀԻՄՆԱԿԱՆ տեխնիկական կուլտուրայից ստացված յեկամուտը (կետ 2) և կոլտնտեսության կողմից տեխնիկական կուլտուրաների բամբակի, շաքարի ճակնդեղ, վուշ, կանեփ հանձնման պլանը գերակատարելու համար ստացած պարգև հավելումի գումարը (կետ 6) ընդվորում 2-րդ յենթակետով ցույց է տրվում այն տեխնիկական կուլտուրայի դրամական յեկամուտը, վորի նկատմամբ տարեկան հաշվետվության 3-րդ աղյուսակում ցույց է տրված աշխորերի ծախսումը (աղյուս. 3 կետ 6)։

5. Մուտքի 8-րդ հոդվածով «կոլտնտեսային առևտրի կարգով անասունների վաճառքից» պետք է ցույց տրվի միայն այն գումարները, վորոնք կոլտնտեսության դրամական ՅԵԿԱՄՈՒՏԻ մեջ մտնում են ԽՍՀՄ Ժողկոմխորհի առ ________ 193 թ. վորոշմամբ համաձայն «Անասունների և անասնապահության մթերքների հանձնումից ու վաճառքից կոլտնտեսության ստացած գումարները բաշխելու կարգի մասին»։ Կապիտալ ներդրման մեջ մտնող գումարներն այստեղ ցույց չեն տրվում։

6. Դրամական յեկամուտի ընդհանուր հանրագումարի տակ (հոդ. 17) 23ա յենթակետով ցույց է տրվում կոլտնտեսության դեբիտորական պարտքերի ընդհանուր գումարը 1938 թ. իրացրած արտադրանքի համար և կոլտնտեսության կողմից 1938 թ. զանազան անձանց և կազմակերպություններին մատուցած ծառայության համար (այս գումարը մտնում է 17-րդ հոդ. նշված

դրամական յեկամուտի հանրագումարի մեջ)։ 24 (բ) յենթակետով ցույց ե տրվում դրամական յեկամուտի այն գումարը, վորը կոլտնտեսությունը նախատեսել ե ստանալ 1939 թվին, 1938 թվի արտադրանքի իրացումից և մտցրել ե 1938 թ. դրամական յեկամուտի մեջ։ Այս գումարը նաև մտնում ե 17-րդ հոդվածով ցույց տված դրամական յեկամուտի գումարի մեջ և պետք ե հավասար լինի 6+12+14 կետերի գումարին։

7. Աղյուսակի մուտքի մասը լրացնելու համար բոլոր տվյալները վերցվում են։

«Նախահաշվով» սյունյակի համար հաստատված նախահաշվից, իսկ «Փաստորեն» սյունյակի համար դրամական յեկամուտի և նրա բաշխման գրքից, այն դեպքում, յեթե կոլտնտեսությունը դրամական յեկամուտների հաշվառումը տարել ե ըստ 19 հաշվի 19/10 հաշվից։

Սակայն, վորպեսզի ըստ յուրաքանչյուր հոդվածի ստանանք ամբողջ դրամական յեկամուտի գումարը, անհրաժեշտ ե վերևում հիշված ձևից հաշվառած գումարներին ավելացնել դրամական յեկամուտի այն գումարները, վորոնք կոլտնտեսականների ընդհանուր ժողովի կողմից նախատեսվել են ստանալ 1939 թվին 1938 թվի արտադրանքի իրացումից և մտցրվել են 1938 թ. յեկամուտի մեջ։

Այս գումարները պետք ե գրանցվեն № 2 ձևի նախահաշվի յուրաքանչյուր հոդվածի վերջին տողում (տարեկան ընդհանուր գումարի տողից առաջ)։

8. 23ա կետը լրացնելու համար տեղեկությունները ստացվում են №№ 6 և 8 հաշիվներից քաղվածքներ հանելու միջոցով, իսկ 24«բ» կետի լրացման համար յեկամուտների բաշխման վերաբերյալ կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշումից։

9. 23-րդ աղյուսակի ծախքերի մասում ցույց ե տրվում դրամական յեկամուտների բաշխումը, գյուղատնտեսական արտելի կանոնադրության 12-րդ կետի համաձայն։

Ընդվորում՝

ա) «Փաստորեն» սյունյակում 1, 4, 10, 11 և 19-ից 21 հոդվածներով պետք ե ցույց տրվեն վոչ միայն փաստորեն ծախսված գումարները այլ և 1938 թվի յեկամուտների հաշվին վճարման յենթակա գումարները (որինակ՝ վարձու հաշվետարի համար նախատեսած, բայց դեռ չվճարված աշխատավարձը, գրասենյակի պիտույքների համար չվճարած հաշիվները և այլն)։

բ) 26 և 27 հոդվածներում ցույց են տրվում բաշխման համար վորոշված և փաստորեն տրվածի տարբերությունը։ Յեթե որինակ՝ տրակտորիստներին 1938 թ. համար հաշված են նրանց վաստակած աշխորերի դիմաց 2000 ռ. իսկ այդ գումարի դիմաց նրանք ստացել են 1200 ռուբ. ավանսով, ապա «Վերջնահաշվով պետք է տալ» 9-րդ կետով պետք է գրանցել 800 ռուբլի (2000—1200) թեկուզ տրակտորիստներից վոմանք նույնիսկ գերավանսավորված լինեն, այսպես էլ կատարվում է նաև հաշվեհարդար կոլտնտեսականների նկատմամբ։ Այսպիսի դեպքերում 6 և 8-րդ կետերի տվյալների գումարը կտա կոլտնտեսականների (առանց տրակտորիստների) բաշխման համար վորոշված դրամական յեկամուտի ընդհանուր գումարը, իսկ 7 և 9-րդ կետերի տվյալների գումարը կտա տրակտորիստների բաշխման համար վորոշված դրամական յեկամուտների ընդհանուր գումարը. իսկ 6+7+8+9-րդ կետերի տակ տվյալների գումարելուց ստացված գումարն էլ պետք է հավասար լինի աշխորերի դիմաց բաշխման համար վորոշված դրամական յեկամուտի ընդհանուր գումարին (23-րդ աղյուսակի 28-րդ հոդված յելքի մասում)։

գ) Տեխնիկական կուլտուրաների վրա աշխատող կոլտնտեսականներին, տեխնիկական կուլտուրաների (շաքարի ճակնդեղի, վուշի, կանեփի) հանձնման պլանի գերակատարման համար տրված պարգև-հավելումները մտցվում են ինչպես 24-րդ հոդվածի, այնպես էլ 28-րդ հոդվածի մեջ, իսկ վճարման յենթակա գումարներն էլ մտցվում են ինչպես 26-րդ հոդված այնպես էլ 28-րդ հոդվածի մեջ։

դ) 3-րդ հատվածով «արտադրանքի ծախքեր դրամական յեկամուտների հաշվին» 5, 6, 7, 8, 9, 12, 13 և 14 հոդվածներով ցույց է տրվում 1938 թ. արտադրության մեջ փաստորեն ծախսված նյութերի արժեքը (և վոչ թե դրամի ծախսումը նյութեր գնելու համար, ինչպես այդ արվել էր 1937 թվին)։

Այս նույն հատվածում, սակայն արտադրական կարիքների համար ծախսերի հանրագումարից հետո, այն կոլտնտեսություններում վորտեղ անցյալ տարի արտադրական ծախքերը մնացել են առանց ծածկելու յեկամուտներով (որինակ՝ վարկերի վերադարձում, վորոնք անցյալ տարի վերցրվել են տրակտորիստների հետ հաշվարկ կատարելու համար, ցույց են տրվում այն գումարները, վորոնք առանձնացվել են այդ ծախքերը ծածկելու

համար: Այդ գումարների գրանցումը նպատակների նշումով կատարվում է ազատ տողում:

Այն դեպքերում, երբ կոլտնտեսությունը 2—3 տարվա ժամկետի վարկով գնված նյութեր է ծախսել (օրինակ՝ հանքային պարարտանյութ), ապա ծախքի մասով ցույց է տրվում ոչ թե այդ նյութերի լրիվ արժեքը, այլ միայն այն գումարը, որը կոլտնտեսությունը վարկի պայմանագրի համաձայն պետք է վճարի 1938 թ. եկամուտների հաշվին: Օրինակ՝ եթե կոլտնտեսությունը 1938 թվին գնել է 2000 ռուբլու հանքային պարարտանյութ 2 տարում վճարելու ժամկետով՝ 1000 ռուբլին 1938 թ. եկամուտներից և 1000 ռուբլին 1939 թվի եկամուտներից և այդ հանքային պարարտանյութերը լրիվին ներդրվել են 1938 թվին, այդ դեպքում արտադրական ծախսերի 6-րդ հոդվածով պետք է ցույց տրվի ոչ թե 2000 ռուբլի, այլ միայն 1000 ռուբլի և հետևապես եկամուտից պետք է հանվի միայն 1000 ռ.:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Եթե կոլտնտեսությունը 1937 թվից նյութերի մնացորդ է ունեցել, որը վճարվել է 1937 թ. եկամուտներից, այդ մնացորդ նյութերի արժեքը 1938 թ. եկամուտներից չի հանվում և հետևապես արտադրական ծախսերի հոդվածում ցույց չի տրվում:

յե) Անբաժանելի ֆոնդին հատկացումները կատարվում են համաձայն ԽՍՀՄ ժողկոմխորհի և Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. դեկտեմբերի 4-ի «Կոլտնտեսություններում դրամական եկամուտների բաշխման մասին» որոշման համաձայն:

Հատկացվող գումարը գրանցվում է 26-րդ կետում (ելքի մասում) «Հատկացում անբաժանելի ֆոնդը լրացնելու համար» տողում, ընդ որում «Նախահաշվով» սյունյակում ցույց է տրվում նախահաշվային գումարը, իսկ «Փաստորեն» սյունյակում՝ ԽՍՀՄ ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. դեկտեմբերի 4-ի «Կոլտնտեսություններում դրամական եկամուտների բաշխման մասին» որոշման համաձայն փաստորեն հատկացրված գումարը: Այն դեպքերում, երբ անբաժանելի ֆոնդի միջոցները չեն բավականացնում Գյուղբանկի պարտքերը մարելու, կատարվում է լրացուցիչ հատկացում կոլտնտեսության ընդհանուր եկամուտից:

10. Դրամական եկամուտների փաստացի բաշխման վերաբերյալ տվյալները վերցվում են՝

ա) Հարկերի և գանձումների գծով՝ դրամական գրքից (իսկ յեթե կոլտնտեսությունը դեռ լրիվին հաշիվ չի տեսել, ապա կոլտնտեսության պարտավորություններից):

բ) Կոլտնտեսականներին և տրակտորիստներին՝ ըստ աշխատօրերի բաշխելու վորոշված գումարների, անբաժանելի ֆոնդին և կուլտուրական կարիքներին հատկացումներ կատարելու մասին՝ յեկամուտների բաշխման վերաբերյալ կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշումից:

գ) Կոլտնտեսականներին և տրակտորիստներին ավանսի կարգով տրված գումարների մասին դրամական գրքից կամ (ձև № 36) 2-րդ մասից:

դ) Արտադրական ծախսերի մասին՝ գնված նյութերի ծախսման վերաբերյալ, № 12, 14 և 15 հաշիվներից քաղվածքներ հանելու միջոցով:

11. Նախահաշվով յեկամուտների բաշխման վերաբերյալ տվյալները, վերցվում են հաստատված նախահաշվից:

12. 29-րդ հոդվածով ծախսերի և հատկացումների հանրագումարը պետք է հավասար լինի 17-րդ հոդվածով ցույց տված դրամական յեկամուտի գումարին:

13. 23-րդ աղյուսակի ներքևում տեղեկություններ են տրըվում շենքերի և ինվենտարի ընթացիկ վերանորոգման և զանազան նյութերի համար կատարած ծախսերի գումարների մասին: Այդ տեղեկությունները վերցվում են անմիջականորեն դրամական գրքից (ձև № 11):

## Աղյուսակ 24 «Կապիտալ ներդրման միջոցները յեվ նրանց ծախսումը»

1. Այս աղյուսակը մուտքերի և ծախքերի բոլոր հոդվածներով պետք է կապիտալ ներդրման բոլոր միջոցների և նրանց հաշվին կատարված ծախսերի լրիվին հաշվառում կատարի: Ընդվորում յեթե 23—27 հոդվածներով ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՐՏՔԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐ ԿԱՆ, ապա այդպիսիք պետք է մտցըրվեն այն գումարների մեջ, վորոնք ցույց են տրված յուրաքանչյուր այդ հոդվածներում: Իսկ յելքի մասով յուրաքանչյուր հոդվածով ցույց են տրվում միայն ծախսերի գումարները (ներառյալ նաև կոլտնտեսության կրեդիտորական պարտավորությունների):

2. 20-րդ հոդվածով «Միջոցների մնացորդը Գյուղբանկում

կապիտալ ներդրումների հաշվում առ 1-ն հունվարի 1938 թ.», «Նախահաշվով» և «Փաստորեն» սյունյակներում ցույց են տրվում № 4 հաշվի № 3 ենթահաշվում առ 1-ն հունվարի 1938 թ. համարվող միևնույն գումարը (թեկուզ և այս ենթահաշվում լինեն միջոցներ, վորոնք սխալմամբ մտցրված են կապիտալ ներդրումների հաշվին:

21-րդ հոդվածում «ենթակա յե գրանցման», «Նախահաշվով» և «Փաստորեն» սյունյակներում ցույց են տրվում միևնույն գումարը: Այդ գումարը գրանցվում ե կոլտնտեսության 1937 թ. տարեկան հաշվետվության տվյալներով (24-րդ աղյուսակի 36 բ. հոդվածի), համեմատելով սույն հրահանգի ընդհանուր ցուցումների 14-րդ կետի համապատասխան:

3. «Գնված շինանյութերի մնացորդի արժեքը» հոդվածով «Նախահաշվով» և «Փաստորեն» սյունյակներում ցույց ե տրվում միևնույն գումարը:

4. Մնացած բոլոր հոդվածները բացի 31-րդ հոդվածից «Նախահաշվով» սյունյակում գրանցվում են այն գումարները, վորոնք նախահաշվով հաստատվել են, իսկ «Փաստորեն» սյունյակում դրամական գրքից նախահաշվի յուրաքանչյուր հոդվածով այնտեղից տարեկան հանրագումարները քաղվածք հանելու միջոցով:

5. Յեթե կոլտնտեսությունը անասնապահության զարգացման պետական պլան չկատարելու հետևանքով անասունների վաճառքից ստացած գումարների մի մասը փոխանցում ե կապիտալ ներդրումներում, ապա պետք ե այդ գումարները գրանցվեն 28-րդ հոդվածով «աղբյուրները» սյունյակում նշելով «առանձնացված ե հոտի վերականգնման համար»:

6. Տարեկան հաշվետվության 24-րդ աղյուսակի 30-րդ կետի ներքևի ազատ տողում գրանցվում ե անբաժանելի ֆոնդի հատկացումները, վորոնք հատկացվում են ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1938 թ. դեկտեմբերի 4-ի «Կոլտնտեսություններում դրամական յեկամուտների բաշխման մասին» վորոշման համաձայն: Այդ գումարները ճշգրիտ կերպով պիտի համապատասխանեն այն գումարին, վորը գրանցված ե 23-րդ աղյուսակի 26-րդ կետում (ծախսերի մասում):

24-րդ աղյուսակում (մուտքի մասում) «Հատկացում գյուղբանկի պարտավորությունները վարկերի գծով մարելու համար» տողում գրանցվում են գյուղբանկի պարտքերը մարելու համար

կոլտնտեսության ընդհանուր յեկամուտից լրացուցիչ կերպով հատկացվող գումարները։ Այդ գումարները ճշտությամբ պետք է համապատասխանեն 23-րդ աղյուսակի 26ա կետում (յելքի մասում) գրանցված գումարներին։

7. 31-րդ հոդվածով «ընդամենը մուտք է յեղել կապիտալ ներդրումների միջոցներ» (տարեսկզբից մնացորդի հետ միասին) «Նախահաշվով» սյունյակում նշվում են բոլոր գումարների հանրագումարը, վորոնք գրանցվել են «Նախահաշվով սյունյակում»։ Իսկ «Փաստորեն» սյունյակում պետք է տրված լինի այն բոլոր գումարների հանրագումարը, վորոնք նշված են այդ սյունյակում։

8. 24-րդ աղյուսակի յելքի մասի 30, 32, 33 և 35—40 հոդվածներով ցույց են տրվում «Նախահաշվով» սյունյակում յուրաքանչյուր հոդվածի գումարները դրամական գրքից (ձև № 11), նախահաշվի յուրաքանչյուր հոդվածով տարեկան հանրագումարն այնտեղից քաղվածքներ հանելու միջոցով։ 31-րդ և 34-րդ հոդվածով «Փաստորեն» սյունյակի համար տեղեկություններ ստացվում են՝ շինարարության և կառուցումների ու շենքերի հիմնական վերանորոգման վրա փաստորեն ծախսված գնովի նյութերի արժեքի վերաբերյալ տվյալները № 13 հաշվի № 2 յենթահաշվից քաղվածքներ անելու միջոցով։ «Նախահաշվով» սյունյակի համար տեղեկություններ վերցվում են նախահաշվից։ 34-րդ հոդվածի «Փաստորեն» սյունյակի համար տեղեկությունները ստացվում են՝ ինչպես վերանորոգման համար ծախսված գնված նյութերի արժեքի, այնպես էլ վարձու բանուժի վարձատրման վերաբերյալ տվյալները № 12/1 հաշվից քաղվածքներ անելու միջոցով։

9. 41-րդ հոդվածով նախահաշիվ կազմելու հրահանգի համաձայն պետք է ցույց տրվեն՝

ա) Սխալմամբ կապիտալ ներդման հաշվին գրանցված այն միջոցները, վորոնք առ 1-ն հունվարի 1938 թ. (հոդված 20) յեղել են այդ հաշվի միջոցների մնացորդում։

բ) Կապիտալ ներդրումների միջոցների գերածախսի այն գումարը վորը յեղել է 1937 թ. տարեկան հաշվետվությունը կազմելիս։

24-րդ աղյուսակում այդ գումարների գրանցումը կատարվում է այսպես. 41-րդ հոդվածով գրանցվում են թե «Նախահաշվով» սյունյակում և թե «Փաստորեն» սյունյակում այն գումարների վերաբերյալ տեղեկությունները, վորոնք առ 1-ն հուն-

վարի 1938 թ. սխալմամբ գրանցված են յեղել կապիտալ ներդրումների հաշվի մնացորդում:

Իսկ անցած տարվա կապիտալ ներդրումների միջոցների գծով, ինչպես «Նախահաշվով» սյունյակի այնպես էլ «Փաստորեն» սյունյակում գրանցվում են «անցած տարիների գերածախսի ծախսման համար» տողում (տես 43-րդ հոդվածը): Այդ գումարների ավյալները «Նախահաշվով» սյունյակի համար վերցվում է 1938 թ. նախահաշվից, իսկ «Փաստորեն» սյունյակի համար՝ դրամական մատյանից (ձև № 11):

10. 43-րդ հոդվածով «ընդամենը կապիտալ ներդրման միջոցների ծախսեր» ցույց է տրվում այն գումարները ընդհանուր հանրագումարը վորոնք գրանցվել են նախորդ հոդվածներում, «Նախահաշվով» սյունյակում առանձին և «Փաստորեն» սյունյակում առանձին:

11. 43-րդ հոդվածից ներքև «բ» կետում տրվում է գնված նյութերի առ 1-ն հունվարի 1939 թ. մնացորդի արժեքը, այդ տեղեկությունները վերցվում են № 3 հաշվից քաղվածք հանելու միջոցով: Ընդ վորում և «Նախահաշվով» և «Փաստորեն» սյունյակներում գրվում է միևնույն գումարը:

12. 44-րդ հոդվածի համար «առ 1-ն հունվարի 1939 թ. կապիտալ ներդրումների միջոցների մնացորդը» «Նախահաշվով» սյունյակով գումարն ստացվում է վորպես տարբերություն 31-րդ հոդվածով գրանցած գումարի (մուտքի մասի «Նախահաշվով» սյունյակի) և բոլոր ծախքերի գումարի (հոդ. 43 «ընդամենը ծախքեր» հոդված «անցյալ տարիների գերածախսի մարման համար») և «Նախահաշվով» սյունյակով առ 1-ն հունվարի 1939 թ. գնված շինարարական նյութերի արժեքի միջև: Նման պայմաններում «Նախահաշվով» սյունյակում ծախքերի հանրագումարը, վորը ցույց է տրվում 45-րդ հոդվածով պետք է հավասար լինի 31-րդ հոդվածի (մուտքի մասի) «Նախահաշվով» սյունյակի հանրագումարին:

13. «Կապիտալ ներդրումների միջոցների մնացորդները առ 1/I 39 թ. 44-րդ հոդվածի գումարը ըստ «Փաստորեն» սյունյակի վորոշվում է վորպես տարբերություն մուտքի 31-րդ հոդվածի «Փաստորեն» սյունյակի գծով յեղած գումարի և այն ավյալների գումարի միջև, վորոնք գրանցված են «Ընդամենը ծախսեր» 43-րդ հոդվածի, «Գերածախսի ծածկման համար» հոդվածի «գրն-

ված շինանյութերի մնացորդն առ 1/I 39 թ. հոդվածի «Փաստորեն» սյունյակում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն դեպքերում յերբ 47-րդ հոդվածի և «Անցած տարիների գերածախսի ծածկման համար» հոդվածի գումարները «Նախահաշվով» սյունյակում կլինեն ավելի քան «Փաստորեն» սյունյակի գումարները, կապիտալ ներդրումների մնացորդի գումարը ստանալու համար հարկավոր է՝ վերոհիշյալ յեղանակով ստացված մնացորդից լրացուցիչ կերպով հանել նախահաշվի և հոդվածների փաստացի գումարների միջև յեղած տարբերությունը:

14. «Ընդամենը ծախսեր մնացորդի հետ» 45-րդ հոդվածի «Նախահաշվով» սյունյակի մեջ ցույց է տրվում այն գումարների հանրագումարը, վորոնք գրանցված են «Նախահաշվով» սյունյակում: Այդ հանրագումարը պետք է հավասար լինի մուտքի 31-րդ հոդվածի «Նախահաշվով» սյունյակում յեղած հանրագումարին: 45-րդ հոդվածի «Փաստացի» սյունյակում ցույց է տրվում այն գումարների հանրագումարը, վորոնք գրանցված են 43-րդ հոդվածի «Ընդամենը ծախսված է», «Գերածախսի ծածկման համար», «Գնված նյութերի մնացորդի արժեքը առ 1/I 1939 թ.» և 44-րդ հոդվածի «Փաստորեն» սյունյակում: Այսպիսով ստացված հանրագումարը պետք է հավասար լինի մուտքի 31-րդ հոդվածի «Փաստորեն» սյունյակի հանրագումարին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե 41-րդ հոդվածով «Կապիտալ ներդրումների հաշվում սխալ մտցրած միջոցների վերադարձումը» և «Անցած տարիների գերածախսի ծածկման համար» հոդվածի գումարը «Նախահաշվով» սյունյակում ավելի կլինի «Փաստացի» սյունյակի գումարից, ապա «Փաստորեն» սյունյակի (45-րդ հոդ.) հանրագումարն ստանալու համար պետք է վերոհիշյալ յեղանակով ստացված հանրագումարին ավելացնել այդ հոդվածների նախահաշվային ու փաստացի տվյալների տարբերությունը: Այսպիսով «Փաստացի» սյունյակում ստացված հանրագումարը ճիշտ միևնույն ձևով ել հենց պետք է հավասար լինի 31-րդ հոդվածի (մուտքի) «Փաստացի» սյունյակի հանրագումարը:

15. Այն դեպքում յերբ կոլտնտեսությունը կապիտալ ներդրումների համար ծախսել է ավելի միջոցներ, քան ունեցել է այդ նպատակի համար, միջոցների մուտքը և յելքը հավասար չի լինի: Այն դեպքում 31-րդ հոդվածի ներքևում գերածախսի գումարը պետք է գրվի «Գերածախս ________ ռուբլի»: Ընդամենը գերածախսի գումարը պետք է վորոշվի վորպես տարբերություն

մուտքի մասի 31-րդ հոդվածի «Փաստորեն» սյունյակում հայտարարով նշված գումարի (կապիտալ ներդրումների բոլոր գումարների հանրագումարին) և 45-րդ «Փաստորեն» սյունյակում հայտարարով նշված ծախսերի գումարի միջև։

16. Անբաժանելի ֆոնդին հատկացրած գումարը, վորը նախատեսնված է ծախսելու 1939 թվին (23-րդ աղյուսակի 26ա կետ), 24-րդ աղյուսակում վոչ մուտքում և վոչ էլ տարվա վերջի մնացորդում ցույց չի տրվում։

## Աղյուսակ 25 «Միջոցներ կուլտուրական կարիքների համար յեվ նրանց ծախսումը»

Աղյուսակը լրացվում է դրամական գրքի տվյալների հիման վրա։ Ընդ վորում հարկավոր է նկատի ունենալ, վոր տըվյալ սունյակում հաշվի յեն առնվում միայն դրամական ֆոնդերը։ Կարիքավոր կոլտնտեսականներին ոգնելու, մանկամսուրները պահպանելու և այլ կարիքների համար առանձնացված մթերքն այստեղ հաշվի չի առնվում։

Առ 1/I 1939 թվի կուլտուրական կարիքների մնացորդը հոդ. 52 պետք է հավասարի բալանսի պասիվի 11-րդ հոդվածի 2-րդ կետի։

## Աղյուսակ 26 «Միջոցներ հաշվարկների համար, նրանց մուտքը յեվ յելքը»

Աղյուսակի այս հատվածի մուտքի մասում կմտնեն արտադրական կարիքների համար ստացած կարճատև վարկերը, դեբիտորներից ստացած միջոցներն իրենց պարտքերի վերադարձման համար, ինչպես և անցյալ տարի բաշխված արտադրանքի իրացումից ստացված հասույթը։ Վերջին դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր անցյալ տարվա արտադրանքից ստացված հասույթը այս հատվածում ցույց է տրվում անցյալ տարվա գներով։ Յեթե անցյալ տարի նախատեսնվել է արտադրանքի իրացում, որինակ՝ 4000 ռ. (և այդ գումարը մտցվել է բաշխման մեջ), իսկ արտադրանքը վաճառվել է 5000 ռ., ապա տվյալ աղյուսակի 17-րդ կետով ցույց է տրվում 4000 ռ. իսկ 1000 ռ. մտցվում է կոլտնտեսության յեկամուտի մեջ 23-րդ աղյուսակի 16-րդ կետով (մուտքի մասում)։ 26-րդ աղյուսակի 55-րդ հոդվածում (յելքի մաս) ցույց է տրվում կոլտնտեսային կուլտ կենցաղային կարիքների համար նախատեսնված միջոցների մնա-

ցորդը առ 1/I 1938 թ. «Նախահաշվով» և «Փաստորեն» սյունյակներով։ 59-րդ հոդվածով ցույց է տրվում 1939 թ. համար գնված հումույթը և նյութերը յեթե այդպիսի գնումը թույլատրըրված է կոլտնտեսության ընդհանուր ժողովի կողմից հաստատված նախահաշվով։

Աղյուսակի յելքի և մուտքի հանրագումարները չեն հաշվեկշռվում։

## Աղյուսակ 27 «Կոլտնտեսության ընդհանուր համախառը յեկամուտը»

1. Այս աղյուսակի նպատակն է ամփոփ ձևով տալ կոլտնտեսության ընդհանուր համախառը յեկամուտը, վորը հարկվում է դրամական յեկամտային հարկով ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1936 թվի հուլիսի 20-ի «Կոլտնտեսություններից գանձվող գյուղատնտեսական հարկը դրամական յեկամտային հարկով փոխարինելու մասին» վորոշման համաձայն և ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից 1938 թվի փետրվարի 1-ի № 102 վորոշմամբ հաստատված ԽՍՀՄ ֆինժողկոմատի 1938 թվի հունվարի 25-ի № 70/25 հրահանգի համաձայն։

2. Այս աղյուսակը լրացնելու համար տվյալները վերցվում են տարեկան հաշվետվության նախորդ աղյուսակներից։

ա) Բուսաբուծության արտադրանքի արժեքը (կետ 1) պետմթերման գներով վերցվում են 7 և 8 աղյուսակներից։ 7-րդ աղյուսակից տվյալները վերցվում են 47 կետի «համախառը բերքի ընդհանուր արժեքը» ավելացնելով դրան 7-րդ աղյուսակի ծանոթությունից 1937 թվի բերքը 1938 թվի կալսելուց ստացված և 1938 թվի յեկամուտի մեջ մտնող հացահատիկի (և այլ մթերքների) ավելցուկի արժեքը 7-րդ աղյուսակի ծանոթության մեջ նշված գումարը պետք է ցույց տրվի 6-րդ կետով։

8-րդ աղյուսակից վերցվում է այգիների, հատապտուղների և խաղողի այգիների համախառը բերքի արժեքի հանրագումարը, վորը ցույց է տրված 7-րդ սյունյակի 10-րդ տողում։

Այդ 3 մեծությունների գումարն էլ գրանցվում է 27-րդ աղյուսակի առաջին յենթակետում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 7-րդ աղյուսակի ծանոթության մեջ նշված այլ նատուրալ յեկամուտների արժեքը, ինչպես որինակ՝ աղունավարձի արժեքը կատարած աշխատանքների համար և այլն ստացած մթերքների արժեքը, չի կարելի

ավելացնել 7-րդ աղյուսակի 47-րդ կետով ցույց տրված 1938 թվի համախառն բերքի արժեքին, քանի որ միևնույն եկամուտների կրկնակի հաշվառում կստացվեր (ագռնավարձի արժեքը հաշվի չի առնվում օժանդակ ձեռնարկների աղյուսակով, վաստակներից գոյացած նատուրալ եկամուտները հաշվի չեն առնվում «դրսի վաստակից և այլ գոյացած եկամուտներ» աղյուսակով)։

բ) 27-րդ աղյուսակի «կոլտնտեսային առևտրի կարգով բուսաբուծության մթերքների վաճառքից ստացած եկամուտը» 2-րդ կետում ցույց է տրվում միայն բուսաբուծության մթերքների վաճառքից (հանձնումից) գոյացած գումարի և այդ մթերքների մուտքի գներով արժեքի միջև եղած տարբերությունը։ Այդ տարբերությունը վերցվում է 17-րդ աղյուսակի 8-րդ սյունյակի 4-րդ տողից։

գ) 4-րդ կետում «անասնապահության արտադրանքի արժեքը բացի մորթվածքի մթերքներից» պետական մթերման գներով վերցվում են 15-րդ աղյուսակից» մթերքների բաշխումը և կոլտնտեսության եկամուտները անասնաբուծությունից 4-րդ սունյակի 14-րդ տողից։

դ) 5-րդ կետում «կոլտնտեսային առևտրի կարգով անասնապահության արտադրանքի վաճառքից ստացված եկամուտը» գրանցվում են 17-րդ աղյուսակի 5, 6, 7 և 8 տողերի տվյալների գումարը, որը ցույց է տրված այդ աղյուսակի 8-րդ սյունյակում։

ե) 6-րդ կետում «վաճառված անասունի արժեքը, վաճառման փաստացի գներով» գրվում են այն գումարների տվյալները, որոնք ցույց են տրված 23-րդ աղյուսակի (մուտքի մասով) հետևյալ կետերում 8-րդ կետ «պետության հանձնված անասուններ» (փաստացի սյունյակում), 9-րդ կետ «կոլտնտեսականներին անասուններ մատակարարելուց» (փաստացի սյունյակում) և 11-րդ կետ «այդ թվում անասունների վաճառքից» գումարած մորթված անասունների արժեքը, որը ցույց է տրված 15-րդ աղյուսակի 4 սյունյակի 6-րդ տողում, և գումարած դրան մորթված անասունների կոլտնտառևտրից ստացած եկամուտը, որը գրանցված է 17-րդ աղյուսակի 8-րդ սյունյակի 9-րդ տողում։

զ) 7-րդ ենթակետում ցույց է տրվում 4, 5, 6 կետերում գրանցված գումարների հանրագումարը։ Այդ հանրագումարը պետք է հավասար լինի 13-րդ աղյուսակի 9-րդ կետում «ընդա-

մենը հանձնված և վաճառված է անասուն, թռչուն գումարով ____________ ռուբլի» ցույց տված գումարին, գումարած՝ 15-րդ աղյուսակի 4-րդ սյունյակի 6 և 14 տողերում ցույց տված մորթվածքի մթերքների և անասնապահության արտադրանքի արժեքը պետմթերման գներով, գումարած՝ 17-րդ աղյուսակի 8-րդ սյունյակի 10-րդ տողում ցույց տված կոլտնտեսային առևտրի կարգով անասնապահության արտադրական վաճառքից ստացված յեկամուտը. հանելով դրանից այն գումարները, վորոնք ցույց են տրված 24-րդ աղյուսակի, 24-րդ յենթակետում «բանող անասունների վաճառքից ստացած հասույթը» և 25-րդ յենթակետում «բարելավված և տոհմային անասուններով փոխարինելու նպատակով մթերատու անասունների վաճառքից» և այն գումարները, վորոնք հատկացվել են հոտի վերականգման համար (անասնաբուծության զարգացման պետական պլանը չկատարելու դեպքում) և գրանցված են 24-րդ աղյուսակի 28-րդ յենթակետով: Յեթե այսպիսի ստուգման դեպքում անասնապահությունից ստացված յեկամուտների գումարների հավասարությունը չի ստացվում, հարկավոր է ստուգել բոլոր տվյալները, քանի վոր տվյալ դեպքում վոչ մի տարբերություն չպիտի ստացվեր:

գ) Ոժանդակ ձեռնարկներից ստացած յեկամուտների գումարը (կետ 8) ստացվում է 18-րդ աղյուսակից «ոժանդակ ձեռնարկների յեկամուտները և ծախսերը» հետևյալ հաշվառքի միջոցով: 18-րդ աղյուսակի 2-րդ սյունյակի հանրագումարում գրանցված համախառը յեկամուտի գումարին, հարկավոր է ավելացնել կոլտնտեսային առևտրի կարգով ոժանդակ ձեռնարկների վոչ գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացված յեկամուտը, վորը ցույց է տրված 17-րդ աղյուսակի 8-րդ սյունյակում (11-րդ տողում):

Այդ յեղանակով ստացված գումարներից պետք է հանել՝

ա) կոլտնտեսության կողմից իրեն պատկանող արդյունաբերական և առևտրական ձեռնարկների շրջանառությունից վճարած հարկի գումարը, վորը ցույց է տրված 23-րդ աղյուսակի 8-րդ կետում (յելքի մասի «փաստորեն» սյունյակով):

բ) կոլտնտեսության ոժանդակ ձեռնարկների վոչ գյուղատնտեսական շինվածքների, վորոնց կոլտնտեսությունը թողել է իր տնտեսության մեջ, արժեքի գումարը ցույց է տրվում 18-րդ աղյուսակի 3-րդ սյունյակի 10-րդ տողի հանրագումարում:

գ) սեփական տնտեսությունից ծախսած հումույթի արժեքը, վորը ցույց ե տրված 18-րդ աղյուսակի 4-րդ սյունյակում 10-րդ տողի հանրագումարում։

ԾԱՆՈԹՈՒՈՅՈՒՆ.— Յեթե այդ սյունյակում հումույթ կա, վոր հաշվետվության նախորդ աղյուսակների մեջ հաշվի չի առնված, որինակ՝ հումույթի արժեքը կղմինդրի արտադրության մեջ, այդ դեպքում այդ հումույթի արժեքը չպետք ե դուրս հանվի. սակայն այն դեպքերում, յերբ այդ հումույթի մթերումը 18-րդ աղյուսակի համապատասխան հոդվածով հաշվի յե առնված վորպես յեկամուտ, այդ դեպքում իր տնտեսությունից ծախսված հումույթի արժեքը լրիվ չափով պետք ե դուրս հանել յեկամուտից, վորը ցույց ե տրված 18-րդ աղյուսակի 4-րդ սյունյակի հանրագումարում։

դ) Գնված հումույթի արժեքը (իսկ կղմինդրի և աղյուսի արտադրություն լինելու դեպքում նաև վառելանյութերի արժեքը) վորը ծախսված ե այն շինվածքների վրա, վորոնք վաճառքի յեն հանվել, այդ տվյալները վերցվում են 5-րդ սյունյակից, սակայն միայն այն շինվածքների նկատմամբ, վորոնք պատրաստվել են վաճառքի համար։ Հետևանքում ստացված տարբերությունն ել կլինի ոժանդակ ձեռնարկների յեկամուտը (հարկված) վորը գրանցվում ե 37-րդ աղյուսակի 8-րդ կետում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ,— Յեթե աղյուսի և կղմինդրի արտադրության մեջ վաճառքի հանելու համար պատրաստված նյութերի վրա ծախսված ե գնված վառելանյութ, ապա նրա արժեքը պետք ե վերցվի 18-րդ աղյուսակի ծանոթությունից։

ը) 9-րդ կետի համար, կողմնակի վաստակից ստացած յեկամուտները» տեղեկությունները վերցվում են 19-րդ աղյուսակից» «կողմնակի վաստակի» վորտեղից 27-րդ աղյուսակում դուրս ե գրվում նատուրալ և դրամական յեկամուտների ընդհանուր գումարը։ 10-րդ կետի համար տեղեկությունները վերցվում են 23-րդ աղյուսակի 20-րդ կետից (մուտքի մասով)։

թ) 11-րդ կետի համար «այլ յեկամտային մուտքեր տվյալները վերցվում են 23-րդ աղյուսակից մուտքի մասով, ինչպես 22-րդ կետի «այլ դրամական յեկամուտների (ըստ 23-րդ աղյուսակի 16-րդ կետի)։

3. Համախառը յեկամուտի ընդհանուր հանրագումար ստացվում ե 3+7+8+9+11 կետերի գումարներից, վորպեսզի ստաց-

վի հարկային յեկամուտ, անհրաժեշտ է 12-րդ կետի հանրագումարից դուրս գալ փչացած ցանքսերի համար ստացած ապահովագրական վճարները (27-րդ աղյուսակ 10-րդ կետ)։

## Աղյուսակ 28 «Մեկ աշխօրին վորոշված տրվելիք յեկամուտը»

Այստեղ ցույց է տրվում թե ըստ աշխօրերի յեկամուտների վերջնական բաշխման ժամանակ, վորքան է վորոշված տալու մեկ աշխօրին՝ կոլտնտեսականներին և տրակտորիստներին առանձին (ներառյալ ինչպես տարվա ընթացքում ստացած ավանսները, այնպես ել վերջնական հաշվով տրվելու յենթակա գումարները)։ Այդ տվյալները վերցվում են յեկամուտների բաշխման վերաբերյալ կոլտնտեսության անդամների ընդհանուր ժողովի վորոշումից։

Ըստ վորում պետք է նկատի ունենալ, վոր կոլտնտեսականների մեկ աշխօրին տրվող դրամը (առանց տրակտորիստների), այս աղյուսակի համար ստացվում է՝ կոլտնտեսականների աշխօրերին բաշխվող դրամական յեկամուտի գումարը (առանց տրակտորիստների) ներառյալ նաև պարգև հավելումից ստացված գումարները, վորը տրված են կամ յենթակա յեն տալու այն ողակների կոլտնտեսականներին, վորոնք գերակատարել են տեխնիկական կուլտուրաների հանձման պլանը, բաժանելով ընդհանուր աշխօրերի թվի վրա (առանց տրակտորիստների) այսինքն՝ 23-րդ աղյուսակի 6+8 կետերի գումարները բաժանելով 3-րդ աղյուսակի 20-րդ կետի վրա դուրս յեկած նույն աղյուսակի 21-րդ կետը։ Սա իհարկե չի նշանակում, վոր այս ձևով մեկ աշխօրին հասանելիք դրամական յեկամուտի չափով պետք է տալ բոլոր կոլտնտեսականներին։

## Աղյուսակ 29 «Կոլտնտեսության հաշվեկշիռը առ 1-ը հունվարի 1939 թիվ»

1. Հաշվեկշռի աղյուսակը լրացնելու համար բոլոր տվյալները պետք է վերցվեն հաշվապահական գրքերի տվյալներից։ Այդ տվյալներն իրենց հերթին պետք է ստուգվեն և ճշտվեն ինվենտարիզացիայի տվյալներով։ Ընդ վորում բոլոր յերևան բերած տարբերությունների մասին պետք է հաղորդել կոլտնտեսության վարչությանը և կոլտնտեսության վարչության վո-

րոշման համաձայն գրանցումներ կատարել ըստ համապատասխան հաշիվների։ Միայն այս պայմաններում կարող է բալանսը ճիշտ լինել և արտահայտվել կոլտնտեսության միջոցների փաստական վիճակը։

2. Կոլտնտեսության 1/I 1939 թվի հաշվեկշիռը պետք է կազմվի կառավարության կողմից 1939 թվի հաստատված հաշվային պլանի հաշիվների և ենթահաշիվների նկատմամբ կիրառվող նոմենկլատուրայով (որոշ դեպքերում լրացուցիչ մանրամասնություններով)։

Այդ նոմենկլատուրայով հաշվեկշիռը կազմելու համար անհրաժեշտ է ինվենտարիզացիայի ժամանակ ապահովել կոլտնտեսության միջոցների և հաշվառքների խմբավորում այդ նոմենկլատուրայի համաձայն։

Դրա հետ միասին հարկ կլինի նոր հաշվային պլանի համաձայն հաշիվների որոշ վերախմբավորում կատարել, համաձայն հենց նույն հաշվային պլանի։

Այսպես՝ № 15 գլխավոր հաշվի «հաշվարկներ ՄՏԿ-ների հետ» գումարն անհրաժեշտ է դասել № 8 գլխավոր հաշվին «հաշվարկները հիմնարկների և անձանց հետ» հետևյալ ենթահաշիվներով՝

ա) հաշվարկները ՄՏԿ-ների կատարած աշխատանքի համար ընամթերքներ.

բ) դրամական հաշվարկներ ՄՏԿ-ների կատարած աշխատանքի դիմաց.

գ) հաշվարկներ ՄՏԿ-ների հետ տրակտորիստներին բնամթերք տալու համար.

դ) հաշվարկներ ՄՏԿ-ների հետ տրակտորիստներին դրամ տալու համար։

Այնուհետև № 9 հաշվի կողմից անհրաժեշտ է հանել 9/5 «այլ գրանցումներ» և 9/9 «այլ շրջանառու ֆոնդեր» ենթահաշիվները հանելու ենթակա են նաև 10/2 հաշիվը «այլ կուտակումներ»։

Այդ հաշիվների գումարները գնում են կորուստները և պակասորդները ծածկելու համար, որոնք ծածկում են ֆոնդերի հաշվին կոլտնտեսականների ընդհանուր ժողովի վորոշման համաձայն։ Այդ նույն գումարների հաշվին գույս է գրվում նաև գնված նյութերի, որոնք ծախսվել են 1938 թ. սակայն վճարվել են 1939 թվի կամ նախորդ տարիների եկամուտի հաշվին

առ 1-ը հունվարի 38 թվի մնացորդի արժեքը։ Յեթե դրանից հետո մասնանշված հաշիվներում մնացորդ լինի (կրեդիտային սալդո) անհրաժեշտ է այդ փոխանցել 9 հաշվի «յեկամուտների հատկացումից գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության 12-րդ կետի համաձայն» յենթահաշվով։

Այնուհետև դուրս հանման յենթակա յե նաև 10/3 հաշիվը «կորուստներ և պակասորդ» (թե ինչպես փակել և մաքրել № 10/3 հաշիվը հրահանգում ցույց է տված հաշիվների յեզրափակման մեջ։

Բացի այդ 9/4 հաշվից անհրաժեշտ է առանձնացնել 9/3 հաշվի (Նոր հաշվային պլանի) համար գումարները «հատկացումներ յեկամուտներից գյուղատնտեսական արտելի որինակելի կանոնադրության 12-րդ կետի համաձայն» և 9/5 յենթահաշվի համար «կուտակումներ շինարարության և կուլտնտեսության կարիքների համար պատրաստած արտադրական միջոցների մեջ» (կոլտնտեսության կողմից պատրաստած նյութերի և կոլտնտեսականների աշխատանքային ներդրումների արժեքը)։

Վերախմբավորման յենթակա յե և 11-րդ հաշվի գումարները այն հաշվով, վորպեսզի 11 գլխավոր հաշվի (Նոր հաշվային պլանի) համար «ոգնության և կուլտ կարիքների ֆոնդեր» առանձնացվի նատուրալ ֆոնդին առանձին և դրամական ֆոնդին առանձին)։

3. Այն բանից հետո, յերբ գրքերում կատարված են ինվենտարիզացիայի և առանձին գումարներ դուրս գրելու կարգի վերաբերյալ վարչության վորոշումից բխող բոլոր գրանցումները յերբ այդ գումարները կարող են վերաբերվել մեղավոր անձանց հաշվին կամ իրեն կոլտնտեսության հաշվին և կատարված են հաշիվների յեզրափակում, հաշվետարը դուրս է բերում յեզրափակիչ բալանսը, լրացնելու տարեկան հաշվետվության 29-րդ աղյուսակը «առ 1-ը հունվարի 1939 թիվ կոլտնտեսության բալանսը»։

4. 1, 2, 3, 4, 6, 12, 13, 14 հոդվածներով բալանսի ակտիվ են փոխանցվում համապատասխան հաշիվների և յենթահաշիվների դեբետորային սալդոն, իսկ 9 և 11 հոդվածներով բալանսի պասիվ են փոխանցվում այդ հաշիվների և յենթահաշիվների կրեդիտային սալդոն։

5. 6 և 8 հոդվածներով հաշվարկներ կոլտնտեսականների, կազմակերպությունների ու անձանց հետ վերցվում են 6 և 8

հաշիվների շրջանառության դեբետային և կրեդիտային սալդոն՝ դեբետային սալդոն գրվում է բալանսի ակտիվում, իսկ կրեդիտայինը պասսիվում։

6. Յեթե պարզվում է, որ 14 հաշվում կան ծախսեր, որոնք չեն ծածկել ընթացիկ տարվա (նոր հաշվային պլանի 3 յենթահաշիվ) կամ նախորդ տարիների յեկամուտներով, նրանց գումարները գրանցվում են բալանսում ակտիվի 14-րդ հոդվածով «յեկամուտներով չծածկված ծախսեր» մակագրված ազատ տողում։

## Աղյուսակ 30 «Կոլտնտեսության կուլտ կենցաղային հիմնարկները»

Աղյուսակում ցույց է տրվում հիմնարկների քանակը և տարողությունը։ Տվյալները վերցվում են առ 1-ը հունվարի 39 թիվ ինվենտարային ցուցակներից։

## Աղյուսակ 31 «Գյուղատնտեսական արտելի հիմնական կադրերը»

Այս աղյուսակը լրացվում է անձնական հարցումների և կոլտնտեսության վարչությունում յեղած տեղեկությունների հիման վրա։

ՎԵՐՍՏՈՒԳՄԱՆ ՔԱՆԱԿԻ ՅԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ (բլանկի վերջին յերեսը)։

4-րդ տողում վերևից ներքև «այդ ժողովում ընդհանուր թվից» բառերից հետո պետք է համարիչում գրել գյուղատնտեսական արտելի անդամների ընդհանուր թիվը (ցուցակային) իսկ հայտարարում տարեկան հաշվետվության հաստատելու օրը կոլտնտեսությունում գտնվող անդամների թիվը։ Այնուհետև ցույց է տրվում կոլտնտեսության տարեկան հաշվետվությունը հաստատող ընդհանուր ժողովի փաստորեն մասնակցած արտելի անդամների թիվը։

3-րդ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՅԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հաշիվների յեզրափակման կարգը տրվում է այս հրահանգի հավելվածում։

4. ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԿՈՆՏՐՈԼՆ ՈՒ ԿԱՊԸ

Այն բանից հետո, յերբ հաշվետվությունը արդեն կազմված կլինի, անհրաժեշտ է ուշադիր կերպով վերանայել բոլոր աղյուսակները։ Պարտադիր է ստուգել բոլոր աղյուսակներում յեղած հաշվումներով բոլոր հանրագումարները և համեմատել մի աղյու-

տակում յեղած տվյալը մյուսի հետ ու վերացնել բոլոր սխալները՝ փաստաթղթերով ստուգելու միջոցով։

Դրանից բացի հարկավոր է ստուգել, վորպեսզի «այդ թվում» տողի համաձայն գրանցված տվյալները բոլոր դեպքերում լինեն վոչ ավել այս թվից, վորի մասն է կազմում նրանք (որինակ՝ վորպեսզի 2-րդ աղյուսակի 7ա կետը չլինի 7-րդ կետից ավելի, վորպեսզի 23-րդ աղյուսակի մուտքի մասի 6-րդ կետը չլինի 4-րդից ավելի։

1. Աղյուսակ 1. 6-րդ կետը հարկավոր է ստուգել 22-րդ աղյուսակի 3-րդ սյունյակի հետ համեմատելու միջոցով, յեթե կոլտնտեսությունը սպասարկվում է ՄՏԿ-ի կողմից, ապա տեղեկությունները պետք է լինեն ինչպես առաջին աղյուսակի 6-րդ կետում, նույնպես և 22-րդ աղյուսակի 2-րդ սյունյակում։

2. Աղյուսակ 2. Կետ 6+10=կետ 1։

3. Աղյուսակ 3. 6-րդ կետը պետք է համեմատվի 22-րդ աղյուսակի 2-րդ կետի (մուտքի գծով) հետ. այդ կետերում տեղեկությունները տրվում են նույն կուլտուրայով։

4. Աղյուսակ 4. Կոլտնտեսության աշխատանքին մասնակցող կոլտնտեսականների քանակը առաջին սյունյակի հանրագումարը վորպես կանոն չպետք է 2-րդ աղյուսակի 7ա, 7բ 8-րդ կետերում ցույց տրված գումարից ավելի լինի։

5. Աղյուսակ 5. Յուրաքանչյուր կուլտուրայի տարածության համախառն բերքի մասին տեղեկությունները պետք է համեմատվեն 7-րդ աղյուսակում յեղած տվյալների հետ, նկատի ունենալով, վոր 8-րդ աղյուսակի տվյալները ավելի չեն կարող լինել, քան 7-րդ աղյուսակի համապատասխան տվյալներից։ Այսպես որինակ՝ 6-րդ աղյուսակի (սյունյակ 4) տվյալները, վորոնք վերաբերվում են փաստորեն հավաքված աշնանացան ցորենի տարածությանը, չեն կարող լինել բարձր 7-րդ աղյուսակի 4-րդ սյունյակում ցույց տրված տարածության մասին աշնանացան ցորենի տվյալներից։

6. Աղյուսակ 7 և 8. Վաճառքի համար առանձնացված, բայց դեռ չծախված արտադրանքը լինելու դեպքում (սյունյակ 13) աղյուսակ 7 և սյունյակ 10, աղյուսակ 8 (անհրաժեշտ է ստուգել թե 23-րդ աղյուսակում կա արդյոք այնտեղ գրանցում 6-րդ կետում) մուտքի մասով։

7. Աղյուսակ 10. Հարկավոր է ստուգել կատարված է արդյոք անասնապահության զարգացման պետական պլանը և չկատարված լինելու դեպքում ստուգել թե 24-րդ աղյուսակի 28-րդ յենթակետով գումարներ առանձնացված են արդյոք անասունների հոտը վերականգնելու համար։

8. Աղյուսակ 13. 3-րդ սյունյակի գումարը (մուտքի գծով) հավասար է 23-րդ աղյուսակի 8-րդ կետին, 6-րդ սյունյակի գումարը (մուտքի գծով) հավասար է 23-րդ աղյուսակի 9-րդ կետին, բայց անասնապահության զարգացման պետական պլանի չկատարման դեպքում առանձին դեպքերում այդ հավասարությունները կարող են չլինել։

9. Աղյուսակ 14. Առկա տնտեսությունների թիվը, որոնք ցույց են տրված այդ աղյուսակի յուրաքանչյուր կետով, չեն կարող բարձր լինել 2-րդ աղյուսակի 6-րդ կետում ցույց տրված առկա տնտեսությունների թվից։

10. Աղյուսակ 17. ա) Յեթե կոլտնտեսությունում հասարակական սննդի գծով հատկացված չի յեղել մթերքներ, 27-րդ աղյուսակի տվյալները 4-րդ տողով 3+6+7 սյունյակների գումարում պետք է հավասար լինի 4-րդ տողին (մուտքի մասով), աղյուսակ 23-րդ հանած 6-րդ կետը (մուտքի մասով) գումարած նույն աղյուսակի 17-րդ կետը (մուտքի մասով) գումարած 24-րդ աղյուսակի 10-րդ տողը։

բ) 27-րդ աղյուսակի 10-րդ տողի տվյալները 3+5+7 գումարին գումարած 13-րդ աղյուսակի 9-րդ տողում նշված տվյալներին (հանած 1 կետը) և 18-րդ յենթակետը։ 23-րդ աղյուսակի 8-րդ կետի և 18-րդ յենթակետում նշված տվյալներին գումարած 24-րդ աղյուսակի 24, 25 և 28 տողերում (մուտքի մասով) գումարած 26-րդ աղյուսակի 40-րդ տողով (մուտքի մասով)։

11. Աղյուսակ 18. Ստուգել ցույց տրված է արդյոք առանձին տողով տեղեկությունները շինվածքների մասին, որոնք պատրաստվել են վաճառքի հանելու համար (օրինակ՝ վաճառքի համար պատրաստված ինվենտարը և այլն)։ Համախառն յեկամուտի գումարը (սյունյակ 2-րդ), որպես կանոն պետք է լինի 13-րդ յենթակետի 23-րդ աղյուսակի գումարից ավելի (մուտքի մասով)։

12. Աղյուսակ 19. 2-րդ սյունյակի գումարն այսինքն՝ աշխատավարձ դրամով, պետք է հավասար լինի կողմնակի յեկամուտի գումարին 23-րդ աղյուսակով (15-րդ կետ մուտքի մասով)։

13. Աղյուսակ 20. Շինարարության վրա դրամական և նյութական ծախսումների ընդհանուր գումարը (15-րդ աղյուսակի հանրագումարը) հիմնական վերանորոգումը (տող 6) չպետք է լինի ցածր 24-րդ աղյուսակի 31, 32, 34—39 տողերով (մուտքի մասով) ցույց տրված տվյալների գումարից։

[184.]
32
A II
23659

14. Աղյուսակ 23. ա) 8-րդ կետի գումարը (յուղի մասով) չպետք է ավելի լինի բալանսի պասսիվի 6-րդ հոդ. 2-րդ «ա» կետի «դրամով ըստ 1938 թ. աշխորերի» գումարից:

բ) 9-րդ կետի գումարը (տրակտորիստներին) չպետք է ավելի լինի բալանսի պասսիվի 8-րդ հոդվածի 4-րդ կետում նշված գումարից:

գ) 26-րդ յենթակետի գումարը (յուղի մասով) պետք է հավասար լինի 24-րդ աղյուսակի «1938 թ. անցած վարկերի գծով բանկին պարտքերի մարման համար հատկացված» հոդվածում նշված գումարից:

դ) 27-րդ յենթակետի գումարը (յուղի մասով) պետք է հավասար լինի 25-րդ աղյուսակի 23-րդ յենթակետով նշված գումարին:

յե) Պետք է ստուգվի ըստ աշխորերի բաշխվող դրամական յեկամտի տոկոսը նշված 5-րդ կետում յեղածի (յուղի մասում):

15. Աղյուսակ 24. 14-րդ տողի գումարը (յուղի մասում) վորպես կանոն պետք է ավելի լինի բալանսի ակտիվի 4-րդ հոդ. 8-րդ կետում նշված գումարից:

16. Աղյուսակ 25. 52-րդ հոդվածի գումարը պետք է հավասար լինի բալանսի պասսիվի 1 հոդ. 2-րդ կետի գումարին:

17. Մեկ աշխորին տրվող մթերքները, վորոնք ցույց են տրված 3—6 սյունյակներում պետք է ստուգվեն VII-րդ աղյուսակի (18-րդ սյունյակի) համապատասխան տվյալները III-րդ աղյուսակի 20-րդ տողի տվյալների վրա բաժանելու միջոցով, իսկ 7—9 սյունյակների տվյալները XV-րդ աղյուսակի (13 սյունյակ) համապատասխան տվյալների վրա բաժանելու միջոցով: Կոլտնտեսականների (առանց տրակտորիստների) մեկ աշխորին տրվող հացահատիկը չպետք է ավելի լինի այն քանակից վորն ստացվում է 11-րդ կետի 7-րդ աղյուս. (18-րդ սյունյակի) տվյալները աշխորերի քանակի վրա (վորոնց վրա բաշխվել է յեկամուտը աղյուսակ 3 կետ 20-ը) բաժանելու հետևանքով:

Սույն հրահանգային ցուցումները տրված են ԽՍՀՄ Հողժողկոմի 1938 թվի ______ № ______ հրամանի հիման վրա:

ԽՍՀՄ Հողժողկոմատի հաշվ.
վիճակագրական բաժին

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003198
ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2